ԱԺ-ն ընդունեց «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքը, որի համաձայն արտակարգ եւ ռազմական դրության պայմաններում խորհրդարանն իրանունք ունի չեղարկել հանրաքվեն, եթե այն պետք է տեղի ունենար արտակարգ դրության ընթացքում:

Չորեքշաբթի
3 հունիսի 2020թ.
№ 13 (529)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆԻՔՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Բայց դո՛ւք, - դո՛ւք, - շվարած,
Ձեր մահից առաջ մահացող,
Ինքնամերժ քծնության հացով
Մահատիպ կյանքին
ձեր վարած, -
Հայրենի Հողմի այս մոլի
Գերանդու եռանդուն թափից,
Գետնահար փռված, անխոս
Օ, վերջին հերկերի ծիլեր...
Եղիշե Չարենց

Կապանը, Գորիսը, Սիսիանը, Մեղրին չմիացան քաջարանցիների կապանյան ցույցին, թեեւ ակցիայի կազմակերպիչները քանիցս կոչ արեցին՝ միանալ իրենց

2020 թ. մայիսի 24-ի լուսադեմին դիմակավորված եւ զինված ոստիկանները ձերբակալել են Քաջարանի համայնքապետ Մանվել Փարամազյանի մերձավոր շրջապատից չորս անձնավորության:

Դրան հաջորդել է քաջարանցիների բողոքի ցույցը Կապանի ոստիկանության եւ ՀՀ քննչական կոմիտեի շենքի դիմաց:

Քաջարանցիները պահանջում էին ձերբակալվածներին չտեղափոխել Երեւան եւ նախաքննությունն իրականացնել Սյունիքում:

Ցուցարարները քանիցս կոչեր ուղղեցին Կապանի, Գորիսի, Սիսիանի, Մեղրու բնակիչներին՝ միանալու իրենց բողոքին, սակայն որեւէ դրական արձագանք չստացան:

Փաստորեն ձախողվեց քաջարանցիների բողոքի ակցիան համայնքի ցույցի վերածելու վարժանքը:

Ուշ երեկոյան ցուցարարները ցրվել են, երբ հայտնի է դարձել, որ մայրաքաղաքից Կապան են ժամանում ոստիկանական ուժեր:

Իսկ ձերբակալվածները, որոնցից մեկն ազատ էր արձակվել, նույն օրը տեղափոխվել են Երեւան:

Քաջարանցիների բողոքի ակցիայի վերաբերյալ առ այսօր հնչում են իրարամերժ տեսակետներ ու գնահատականներ: //

Ռեւանշիստները հիմա էլ ուրի՞շ «պլացդարմ» են փնտրում

Այն, ինչ նախօրեին տեղի ունեցավ Կապանում, որեւէ կերպ չի տեղավորվում առողջ բանականության սահմաններում: Խնդիրը նույնիսկ այն չէ, որ արտակարգ դրության պայմաններում հարյուրավոր քաղաքացիներ, բացարձակապես անտեսելով հակահամաճարակային անվտանգության կանոնները, բողոքի ակցիա էին կազմակերպել ու նույնիսկ փորձում էին բախումներ հրահրել իրավապահների հետ: Խնդիրը շատ ավելի խորն էր, կարելի է նույնիսկ ասել՝ աշխարհայացքային: Ի՞նչ էր տեղի ունեցել ի վերջո:

Քաջարանում շաբաթներ առաջ ինչ-որ զանգվածային ծեծկռտուք էր տեղի ունեցել, մարդ էին առեւանգել եւ այլն, ու այդ ամենը՝ Քաջարանի համայնքապետի մասնակցությամբ: Ոստիկաններն էլ մի քանի հոգու բերման էին ենթարկել, եւ, ըստ շրջանառվող տեղեկությունների, նրանց նկատմամբ բռնություններ կիրառել (ներկայումս ծառայողական քննություն է ընթանում): Բերման ենթարկվածների հարազատներն ու ընկերներն էլ, Քաջարանի համայնքապետի ակտիվ մասնակցությամբ, բողոքում էին ու պահանջում, որ ձերբակալվածներին Երեւան չտանեն: Վերջ. այսքանը:

Հասկանալի է, որ զանգվածային ծեծկռտուքի ու մարդ առեւանգելու համար բոլոր մեղավորները պիտի պատժվեն, ու հասկանալի է նաեւ, որ բերման ենթարկվածների նկատմամբ բռնություն կիրառած իրավապահները նույնպես պիտի ամենայն խստությամբ պատասխանատվության ենթարկվեն: Այստեղ երկու կարծիք լինել չի կարող: Բայց ի՞նչն է այս պատմության մեջ ամենատարօրինակն ու ցավալին: Նախ՝ ցուցարարների պահանջը՝ ձերբակալվածներին պահել Կապանում ու դատն էլ այնտեղ անցկացնել: Այնպիսի տպավորություն է, թե Երեւանում ու Կապանում արդարադատության տարբեր համակարգեր են գործում, եւ ընդհանրապես՝ Սյունիքը

Շարունակությունը՝ էջ 2

Քաջարանում անձի առեւանգման դեպքով հարուցված քրեական գործը

Մայիսի 24-ի ուշ երեկոյան ՀՀ քննչական կոմիտեն տարածել է պարզաբանում Քաջարանում անձի առեւանգման դեպքով հարուցված քրեական գործի վերաբերյալ:

Պարզաբանման մեջ մասնավորապես նշված է՝ «ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ Քաջարանի բնակիչներ Գ. Մ.-ի և նրա ընկերոջ՝ Կ. Թ.-ի միջեւ տեղի ունեցած վեճի հանգամանքների պարզաբանման համար Քաջարան համայնքի ղեկավարի կանչով, 2020թ. ապրիլի 26-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում, Քաջարանի Լեռնագործների փողոցում գտնվող, վերջինիս պատկանող բենզալցակայանի հետնամասում գտնվող չգործող նախկին ռեստորանի շինությունում հավաքվել են համայնքի ղեկավարը եւ շուրջ 20 հոգի, որտեղ տեղի է ունեցել ծեծկռտուք:

2020թ. ապրիլի 29-ին՝ ժամը 13:30-ի սահմաններում, Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի աշխատակիցներ Բ. Հ.-ն, նրա եղբայրը՝ Լ. Հ.-ն, Խ. Մ.-ն եւ Մ. Ս.-ն, կոմբինատի ավտոկայանատեղիում բռնություն գործադրելով, առեւանգել են Շ. Մ.-ին եւ Խ.Մ.-ի կողմից վարվող ավտոմեքենայով տեղափոխել «Աժդանակ» ՍՊԸ-ի տարածք, Ա. Հ.-ի և Գ. Մ.-ի հետ ծեծի ենթարկել նրան»:

Քննչական կոմիտեի պարզաբանման մեջ այնուհետեւ նշվում է դեպքերի հետագա զարգացման մասին:

Այնուհետեւ՝ *«2020թ. մայիսի 24-ին Խ. Մ-ն, Մ. Ս-ն եւ Լ. Հ-ն ձերբակալվել են՝ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, իսկ Ա. Պ.-ն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործություններ կատարելու կասկածանքով:*

Իրականացվում են մեծածավալ քննչական գործողություններ եւ օպերատիվ միջոցառումներ՝ համայնքի ղեկավարի մասնակցությունը դեպքերին ստուգելու եւ նրա դերակատարումը պարզելու ուղղությամբ:

Նախաքննությունը շարունակվում է:

Միաժամանակ ՀՀ քննչական կոմիտեն հորդորում է չխոչընդոտել քրեական գործի քննությանն ու արդարադատության իրականացմանը, քանի որ դրա համար նախատեսված է քրեական պատասխանատվություն»:

Հ.Գ. Մայիսի 24-ին Քաջարանում տեղի ունեցած հավաքի մասնակիցներից 20-ի վերաբերյալ կազմվել է վարչական իրավախախտումների արձանագրություն: Իսկ Քաջարանի միջադեպով հարուցված քրեական գործով կալանավորվել են երեք անձնավորություն: //

Կարեն Համբարձումյան. «Թող ոչ մեկը չփորձի Սյունիքն օգտագործել իր ոչ օրինական եւ ոչ պետական ծրագրերի, անձնական ամբիցիաների համար»

«Սյունյաց երկրի» հարցերին պատասխանում է ԱԺ «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր, Սյունիքի նախկին մարզպետ Կարեն Համբարձումյանը

– Պարոն Համբարձումյան, Դուք հաճախակի եք լինում Սյունիքում եւ հանդիպում ընտրողների հետ, սակայն ներկա այցը, որ համընկել է քաջարանցիների բողոքի ակցիային, որոշակի հետաքրքրություն է առաջացրել մեզանում:

Ի՞նչ առաքելությամբ եք Կապանում:

– Երեկ տեղեկացա մարզում, ավելի ստույգ՝ Կապանի ոստիկանության եւ մարզի քննչական վարչության շենքերի դիմաց տեղի ունեցող բողոքի ակցիայի մասին:

Որպես տարածաշրջանից ընտրված պատգամավոր՝ պարտքս համարեցի լինել տեղում, լինել մարդկանց հետ, իմ ընտրողների հետ, որ հստակ պատկերացում կազմեմ, թե ինչ է կատարվում մարզկենտրոնում:

Կեսգիշերին մոտ ուղեւորվել եմ Կապան, լուսադեմին տեղ հասել եւ անմիջապես իրավապահ մարմինների ղեկավարների հետ հանդիպումներ սկսել: Վաղ առավոտից Կապանում եւ Քաջարանում նույնպես բազմաթիվ հանդիպումներ եմ ունեցել: Իսկ ճանապարհին օն-լայն տարբերակով հետեւում էի տեղի ունեցող բողոքի ակցիայի ընթացքին, որտեղ հարյուրավոր մարդիկ էին հավաքվել եւ ինչ-ինչ պահանջներ էին ներկայացնում:

Այժմ, կարող եմ ասել, լիարժեք պատկերացում ունեմ կատարվածի վերաբերյալ:

– Ձեր գնահատականը Կապանում մայիսի 24-ին տեղի ունեցած բողոքի ակցիային:

– Եթե մայիսի 24-ի բողոքի ակցիան լիներ ժողովրդի ցանկությամբ եւ օրինական պահանջներով, կարելի էր նորմալ գնահատել, բայց...

Կատարվածն արդարացում չունի մեկ այլ առումով եւս: Երկիրը գտնվում է արտակարգ դրության մեջ, եւ, ցավոք, դեռ չգիտենք, թե ինչ հետեւանքներ կունենա մարդկային նման կուտակումը համաճարակի տարածման առումով, թեեւ անընդհատ պահանջ էր դրվում պահպանել սոցիալական հեռավորություն, չհավաքվել իրար գլխի եւ այլն:

Բացի այդ, ի՞նչ է նշանակում հավաքվել ոստիկանության շենքի դիմաց եւ ցույց անել, երբ ժողովրդի անվտանգության առաջին երաշխավորը հենց ոստիկանությունն է:

Մի խոսքով՝ արտակարգ իրավիճակը պատեհ պահ չէր մարդկանց հավաքելու եւ ցույց անելու համար:

Երկրորդ՝ ակցիան դիտում եմ որպես նախաքննական մարմնի վրա ճնշում գործադրելու գործողություն: Արդյո՞ք իրավունք ունենք խոչընդոտել ոստիկանության կամ նախաքննական մարմնի գործունեությունը, երբ խոսքը կոնկրետ քրեական գործի սահմաններում իրականացվող նախաքննության մասին է:

Մինչդեռ արդար խոսքը տեղ հասցնելու տարբեր հարթակներ կան. Մարդու իրավունքների պաշտպան, Ազգային ժողովի համապատասխան հանձնաժողով եւ այլն: Ինքս էլ որպես Վայոց ձորից եւ Սյունիքից ընտրված պատգամավոր՝ միշտ իմ ընտրողների կողքին եմ՝ նրանց սատար լինելու պատրաստակամությամբ՝ հնարավորություններիս չափով: Իսկ իմ գործելակերպը՝ օրենքի սահմաններում ընտրողների առաջադրած հարցերին լուծում տալն է:

– Ինչպես շատ լրատվամիջոցներ, Դուք էլ, ըստ էության, այն համոզմանն եք, որ քաջարանցիների բողոքի ակցիայի ինքնաբուխ լինելը խիստ թեական է:

– Հարցին այսպես պատասխանեմ. որոշ մարդիկ իրենց «կաշին» փրկելու համար ժողովրդին կենդանի վահան էին դարձրել, նաեւ նման ձեւով իրենց ամբիցիաները

Շարունակությունը՝ էջ 5

Հունան Պողոսյան. «Քաջարանում կատարված ձերբակալությունները կոնկրետ քրեական գործի շրջանակում են եւ որեւէ քաղաքական ենթատեքստ չունեն»

Այսպիսի հայտարարություն է արել Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը՝ մարզի քննչական վարչության եւ ոստիկանության Կապանի բաժնի մերձակայքում մայիսի 24-ին հավաքված քաջարանցիների հետ հանդիպման ժամանակ:

Մարզպետը նշել է նաեւ, որ քրեական գործը հարուցվել է Երեւանում, որտեղ էլ իրականացվում է նախաքննություն:

Հունան Պողոսյանը հավաքված քաջարանցիներին առաջարկել է՝ կազմել 15 հոգուց բաղկացած խումբ եւ այցելել մարզպետարան՝ ստեղծված իրավիճակն առավել հանգամանալից քննարկելու եւ կարգավորման ուղիներ մատնանշելու համար: //

«Ոմն Վահեն» եւ քաջարանցիների բողոքի ակցիան

Քաջարանցիների բողոքի ակցիայի (24.05.2020 թ.) վերաբերյալ ուշագրավ դիտարկում է արել Ֆեյսբուքյան օգտատեր Հայկ Ստեփանյանը:

Մայիսի 24-ի ֆեյսբուքյան իր էջում արված ուղերձում նա անդրադարձել է նաեւ տեղի ունեցած իրադարձությունում Վահե Ա. Հակոբյանի դերակատարության մասին:

Ըստ Հայկ Ստեփանյանի՝ մի խումբ մարդիկ պլանավորել էին հակահեղափոխություն իրականացնել երկրում, ընդ որում՝ այն սկսելով Քաջարանից:

Հեղինակի կարծիքով՝ հակահեղափոխական գործողություններ պլանավորելուն մասնակցել է նաեւ «ոմն Վահե, Վահե Հակոբյան, ով հանդիսանում է նաեւ «PARA TV»-ի սեփականատեր, այսինքն նրա կինն է հանդիսանում (ըստ տեղեկությունների) սեփականատեր...»:

Հակահեղափոխություն իրականացնող «մի խումբ» մարդկանց թվում նշվում է Արթուր Վանեցյանի եւ «հնուց մնացած քաղաքապետի» մասին:

Հ.Գ. Հանրապետության իրավապահ մարմինները դեռեւս չեն արձագանքել Հայկ Ստեփանյանի հայտարարությանը: //

Ռեւանշիստները հիմա էլ ուրի՞շ «պլացդարմ» են փնտրում

Սկիզբը՝ էջ 1

Հայաստան չէ, եւ խոսքը մի երկրից այլ երկիր մեղադրյալների էքստրադիցիայի մասին է: Երկրորդը (սա ամենատարօրինակն էր)՝ ձերբակալվածները ոստիկանության բաժանմունքից դուրս բերվեցին ցուցարարների ծափահարությունների ներքո: Հասկանո՞ւմ եք, թե ուր ենք հասել: Մարդիկ առաջնագծից չեն վերադարձել, թշնամու դիվերսիա չեն կանխել, ընդամենը կասկածվում են մարդ առեւանգելու եւ մի քանի հոգով ծեծելու մեջ: Եվ... դիմավորվում են որպես հերոսներ: Ու ընդդիմադիր քարոզչամիջոցներում եւ սոցկայքերում էլ այս ամենը ներկայացվում է որպես իշխանությունների կողմից քաղաքական բռնաճնշումներ իրականացնելու փորձ: Իբր՝ իշխանություններն ուզում են «նստացնել» բոլոր այն համայնքապետներին, ովքեր «Իմ քայլից» չեն, Երեւանից եկել ու փորձում են «իրենց կանոնները հաստատել» Սյունիքում, հպարտ սյունեցիներն էլ, հավատարիմ մնալով իրենց պապերի ըմբոստ ոգուն, դիմադրում են: Թե ինչու է ընդդիմադիր քարոզչամեքենան այսպես ներկայացնում իրավիճակը՝ հասկանալի է: Նրանց պետք են «բռնապետական հակումներով իշխանություններ» եւ «ըմբոստ մարզ» (Արցախը նման սխեմայի մեջ ներքաշելը

չափազանց վտանգավոր կլիներ), ու պետք է ամեն գնով ցույց տալ, թե տեսեք՝ իշխանությունները չեն վերահսկում վիճակը, ժողովուրդն իրավապահներին թշնամաբար է վերաբերվում, եւ ընդհանրապես՝ երկրում անիշխանություն է:

Այն, որ ամեն գնով ռեւանշի ձգտողները հանուն իրենց քաղաքական շահերի (եւ կուտակածը պահպանելու) ոչնչի առջեւ կանգ չեն առնելու եւ օգտագործելու են ցանկացած առիթ՝ վաղուց ակնհայտ էր: Բայց ակնհայտ է նաեւ, որ ոստիկանական համակարգում այս էլ որերորդ անգամ գտնվում են մարդիկ, ովքեր տալիս են այդ առիթը՝ դրանով իսկ կամա թե ակամա մեծ ծառայություն մատուցելով իշխանությունների եւ ժողովրդի միջեւ անվստահություն սերմանելու փափագով տառապողներին: Այնպես որ՝ իշխանություններն այս հարցում անելիքներ ունեն ու պիտի ամենայն մանրամասնությամբ պարզեն միջադեպի հանգամանքները եւ համապատասխան եզրակացություններ անեն: Փոխզիջում չի կարող լինել ոչ միայն կրիմինալի, այլեւ կրիմինալի դեմ հակաօրինական մեթոդներով պայքարողների հետ:

Իսկ Սյունիքում, ինչպեսեւ ողջ Հայաստանում, մարդիկ, վստահաբար, շատ լավ տեսնում ու հասկանում են, թե ինչ է տեղի ունենում իրականում:

ARMTIMES.COM

Քաջարանի համայնքապետ Մանվելի անսպասելի արձակուրդը

Մայիսի 24-ին Կապանի ոստիկանության եւ մարզային քննչական վարչության շենքերի դիմաց տեղի ունեցած քաջարանցիների բողոքի ակցիայի գլխավոր հերոսը, անշուշտ, Քաջարանի համայնքապետ Մանվելն էր:

Ակցիայի մասնակիցները նրան ծափահարություններով դիմավորեցին: Նրա ելույթը օրենքի, օրինականության մասին էր:

Սակայն, որքան էլ տարօրինակ է, հաջորդ առավոտյան (25 մայիսի 2020 թ.) հայտնի դարձավ, որ երեկվա հերոսն ակցիայի մասնակիցներին հանձնել է բախտի քմահաճույքին ու մեկնել արձակուրդ:

Ընդ որում՝ խոշորացված Քաջարան համայնքի ղեկավարի արձակուրդ մեկնելու մասին տեղյակ չեն եղել նաեւ Սյունիքի մարզպետարանում:

Մայրաքաղաքային լրատվամիջոցներից մի քանիսը, մինչդեռ, մտահոգված են՝ կվերադառնա՞ Մանվելն արձակուրդից, թե՞ կհեռանա երկրից (օրինակ՝ https://youtu.be/R-vqF5MA2rE):

Հ.Գ. 1 Քաջարանի համայնքապետարանի մեր աղբյուրը տեղեկացնում է, որ մայիսի 24-ին Մանվելի ստորագրությամբ համացանցում տարածված հայտարարությունը պատրաստել է Կապանի տարածաշրջանի հանրակրթական դպրոցներից մեկի ոչ բարեհամբավ տնօրեն-ուհին, ով Կապանում վերջին տարիներին տեղեկություններ է հավաքում Զանգեզուրի ՊՄԿ-ի ղեկավարների մասին ոչ դրական արտահայտվողների վերաբերյալ եւ զեկուցում գաղութարարներին՝ վճարի դիմաց:

Հ.Գ. 2 Այնուամենայնիվ, կարիք չկար մայիսի 24-ի ակցիային մասնակից դարձնել նաեւ ԶՊՄԿ-ի արհմիության նախագահ Դավիթին, թեեւ նրան փոխարինող մոլորակում գտնելը ոչ դյուրին գործ է:
Հետաքրքիր է՝ կարողացա՞վ ճշտել, թե կոմբինատից ովքեր են ակցիայի վայր հասել, ովքեր՝ ոչ:
Հետաքրքիր է՝ ակցիայի վայր հասածները հավելավճար կամ օգնություն կստանա՞ն...

//

Սյունիքից հակահեղափոխություն չի սկսվելու. իրավապահ համակարգը տիրապետում է իրավիճակին եւ կոշտ է արձագանքելու

Սյունիքի մարզի Կապան քաղաքում տեղի ունեցած բողոքի ակցիայի շուրջ աղմուկը հրահրված էր որոշ ուժերի կողմից՝ ինչ-որ պրոցեսներ բորբոքելու համար, սակայն այդ ամենը թույլ չի տրվելու եւ կանխվելու է:

Անդրադառնալով Կապանի ոստիկանության առջեւ տեղի ունեցած բողոքի ակցիային եւ հակահեղափոխությունը Սյունիքից սկսելու կոչերին՝ մեզ հետ զրույցում նման կարծիք հայտնեց ծնունդով սյունեցի պատգամավոր **Տիգրան Կարապետյանը** եւ վստահեցրեց. «Սյունիքից հակահեղափոխություն չի սկսվելու»:

Կապանի ոստիկանության առջեւ տեղի ունեցած բողոքի ակցիայի պատճառը 4 անձանց ձերբակալությունն էր: Քաջարան համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանի մտերիմների ձերբակալությունը, ինչպես ավելի ուշ Քննչական կոմիտեի հաղորդագրությունից պարզվեց, պայմանավորված էր ծեծի, առեւանգման եւ թմրանյութ պահելու վերաբերյալ հարուցված քրեական գործով: Ընդ որում, չի բացառվում, որ հաղորդագրությունում նշված հանցանքներում իր ներգրավվածությունը ունեցել է նաեւ քաղաքապետը, որը բողոքի ակցիայի ակտիվ մասնակիցներից մեկն էր: Քաղաքապետի մասնակցության հանգամանքը կոմիտեն դեռ ստուգում է:

Իսկ բողոքի ակցիայի ընթացքում, ինչպես հայտնի է՝ հնչում էին նաեւ քաղաքական կոչեր: Համացանցը ողողված էր նախկին իշխանությունների մի շրջանակի կողմից Կապանից հակահեղափոխություն սկսելու մտադրության մասին բարձրաձայնումներով, երբեմն՝ ակցիայի մասնակիցներին ուղղված կոչերով: Տեղի ունեցածի շուրջ մեր զրույցը «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Տիգրան Կարապետյանի հետ՝ ստորեւ.

– Պարոն Կարապետյան, ի՞նչ էր տեղի ունենում Կապանում: Ձեզ համար պա՞րզ էր, թե ինչ էին պահանջում բողոքի ակցիայի մասնակիցները:

– Տեղի է ունեցել հանցագործություն, հարուցվել է քրեական գործ՝ ծեծի, առեւանգման, թմրամիջոցներ պահելու եւ այլ դեպքերի առթիվ: Քրգործի շրջանակներում ոստիկանությունը անձանց է ձերբակալել, որից հետո բողոքի ակցիա է սկսվել: Հավաքվածները պահանջում էին, որ ոստիկանությունը ազատ արձակի ձերբակալվածներին եւ նրանց չտեղափոխի Երեւան: Այսինքն, նրանք պահանջում էին քրգործի քննությունը իրականացնել մի վայրում (ոստիկանության Կապանի բաժնում), մի գերատեսչությունում, որը դրա իրավասությունը չունի:

– Դժգոհություն կար նաեւ ոստիկանությունում ձերբակալվածներից մեկի նկատմամբ բռնություն կիրառելու վերաբերյալ:

– Այդ ամենը կպարզվի:

– Ո՞վ է տուժողը, տեղյա՞կ եք:

– Ես քրեական գործի մանրամասներին չեմ տիրապետում, որովհետեւ նախաքննական գաղտնիք է: Քննչական կոմիտեն ու ոստիկանությունը իրականացնում են լայնածավալ միջոցառումներ՝ պարզելու դեպքի բոլոր մեղավորներին, տուժողներին, նրանց շրջանակը: Ես խոսել եմ մարզի ղեկավարության հետ, ոստիկանության ղեկավարության եւ մարզի պատասխանատուների, ԱԱԾ պատասխանատուների հետ, բայց դրանք ընդհանրական տեղեկություններ են:

- Նախկին իշխանություններին կողմակից որոշ խմբեր համացանցում քաղաքականացնում էին ակցիան, կոչեր էին անում հակահեղափոխությունը Կապանից սկսել: Քաղաքական որեւէ ենթատեքստ ունե՞ր տեղի ունեցածը:

– Ամեն ինչ զուտ իրավական էր, որեւէ քաղաքական շարժառիթ չկար: Ակցիայի մասնակիցների թվում կային ձերբակալվածների հարազատներ, բայց նաեւ կային ուժեր, որոնք փորձում էին քաղաքական ենթատեքստ տալ ակնհայտ քրեական գործին: Իրենք ինչ էին պլանավորում, ինչ էին ուզում՝ կարծում եմ իրենք պետք է պատասխանեն, բայց ակնհայտ է, որ կային որոշակի շահեր, որոնք պայմանավորված էին ոչ միայն այդ քրեական գործով, այլ Սյունիքում որոշակի պրոցեսներ հրահրելով:

– Բողոքի ակցիայի ընթացքում հնչում էին նաեւ քաղաքական կոչեր: Ի՞նչ կապ ունեին այդ կոչերը, ինչո՞ւ էր քաղաքապետը հայտարարում, թե իր նկատմամբ քաղաքական հետապնդում է իրականացվում: Նա հավանաբար նկատի ուներ, որ ինքը ոչ թե իշխող ուժի ներկայացուցիչ է, այլ նախկին իշխանությունների օրոք աշխատած եւ նրանց հայացքները կիսած անձ:

– Եթե նայենք, թե ովքեր էին կարծիքները հնչեցնում, ապստամբության կոչ անում եւ այլն, պարզ է, որ մարդիկ փորձում էին քաղաքականացնել ակնհայտ իրավական գործընթացը: Վստահեցնում եմ ձեզ՝ որեւէ քաղաքական ենթատեքստ, դրդապատճառ եւ այլն այս քրեական գործի շրջանակներում չկա: Տեղի է ունեցել հանցագործություն, Քննչական կոմիտեն այն որակել է որպես առեւանգում, ծեծ եւ բռնության գործադրում, քրգործի շրջանակներում տեղի են ունեցել այդ ձերբակալությունները: Ինչ վերաբերում է շահարկումներին, թե Սյունիքի մարզի համայնքապետները մեր թիմի անդամ չեն եւ այլն, մի հուշում անեմ ընդամենը. հեղափոխությունից հետո Սյունիքի մարզում կատարված սուբվենցիոն ծրագրերը աննախադեպ մեծ են եղել եւ, հետեւաբար, եթե լիներ թիմերի բաժանման սկզբունք, նման հատկացումներ այդ համայնքներին չէին տրամադրվի: Այնպես որ՝ վստահեցնում եմ՝ այստեղ իշխող ուժը որեւէ տարանջատում չի դրել:

– Իշխող ուժը չի դրել տարանջատում, իսկ համայնքապետները նույն կե՞րպ են տրամադրված եղել:

– Համայնքի ղեկավարների իրավունքներն ու պարտավորությունները կարգավորվում են ՏԻՄ օրենքով: Անկախ իրենց քաղաքական հայացքներից, իրենք պետք է մնան իրենց լիազորությունների շրջանակում: Եթե լիներ լիազորություններից դուրս քայլ, ապա կլիներ իրավական պատասխան այդ հիմքով:

– Պարոն Կարապետյան, վստահաբար ձեզ հայտնի են մամուլում հրապարակված հետաքննությունները, ըստ որոնց՝ Սերժ Սարգսյանի փեսա Միքայել Մինասյանը որոշակի կապ ունի Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հետ: Միջադեպի մասնակիցների թվում կան այդ գործարանի աշխատակիցներ, Սյունիքում շատերն են այդ գործարանում աշխատում: Հաշվի առնելով, որ Միքայել Մինասյանը հակահեղափոխության կոչով հանդես եկողներից մեկն է, կարելի՞ է ասել, որ ակցիան քաղաքականացնողներից, հրահրողներից մեկը նա էր:

– Միքայել Մինասյանի վերաբերյալ հարուցված քրգործերի շրջանակներում իրավապահ համակարգը նրան բազմաթիվ հարցեր ունի ուղղելու: Ընդհատակից, խոհանոցից կոչեր անելու փոխարեն լավ կլինի Միքայել Մինասյանը ներկայանա իրավապահ մարմիններին եւ պատասխանի այդ հարցերին: Իհարկե, Վլադիմիր Լենինին հաջողվեց, բայց ժամանակները փոխվել են, եւ ես կարծում եմ՝ ընդհատակից հեղափոխություն, հակահեղափոխություն անելու նրա փորձերը ձախողվելու են:

– Իսկ ըստ ձեզ, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գործող ղեկավարությունը ունի՞ շահագրգռվածություն նման քաղաքական ակցիաներ հրահրելու:

– Լավ կլինի հարցը ուղղվի կոմբինատի ղեկավարությանը: Այն, որ Կապանում տեղի ունեցած բողոքի ակցիայի մասնակիցները զուտ այն մարդիկ չէին, որոնք եկել էին իրենց հարազատների համար բողոքելու, այլ այնտեղ կային նաեւ մարդիկ, որոնք փորձում էին այդ ամենը օգտագործել... ակցիան ուղիղ եթերում էր, կոչերը բոլորը լսել են՝ միացեք, եւ այլն: Այստեղ իրավապահ համակարգը, ԱԱԾ-ն անելիք ունի, ոստիկանությունը անելիք ունի՝ պարզելու պատճառները, շարժառիթները եւ նպատակները: Անձամբ ես չէի ցանկանա եւ կոչ կանեի ընդհանրապես բոլոր տնտեսական շրջանակներին՝ զբաղվել իրենց տնտեսական գործունեությամբ եւ քաղաքական գործընթացների մեջ չփորձել որեւէ կերպ շարժումներ հրահրել:

– Ձեր կարծիքով այդ ամենը շարունակություն կունենա՞, հակահեղափոխության կոչերը կմարե՞ն, թե՞ դրանց հեղինակները կշարունակեն իրենց կոչերը՝ փորձելով դրանք կոչերի մակարդակից տեղափոխել իրականություն:

– Հիմա քրեական գործը Քննչական կոմիտեում է ու քննվելու է Երեւանում, այսինքն՝ Կապանում ակցիաների պատճառ արդեն չկա: Իհարկե, եթե մարդիկ ցանկանան իրենց ազատ կամքն արտահայտել՝ այդտեղ խնդիր չկա: Բայց եթե փորձ է արվելու հակաօրինական գործողություններ հրահրել, կազմակերպել, այդ ամենը կանխվելու է: Սյունիքից հակահեղափոխություն չի սկսվելու: ՀՀ իրավապահ համակարգը ամբողջապես տիրապետում է երկրում իրավիճակին եւ ցանկացած գործողություն, որը չի բխելու մեր օրենքներից եւ Սահմանադրությունից՝ շատ կոշտ արձագանքի է արժանանալու: Սյունիքը փակել է անպատժելիության էջը: Բոլոր հանցագործները պատժվելու են, Սյունիքում բդեշխության վերականգնում չի լինելու:

* * *

Մենք փորձեցինք տեղի ունեցածի շուրջ մանրամասներ ճշտել նաեւ Սյունիքի մարզպետարանից: Մարզպետի տեղակալ Նարեկ Բաբայանը մեր զրույցում ասաց, որ քրգործի մանրամասներին տեղյակ չէ, չի էլ փորձել տեղեկանալ՝ խուսափելու համար դրան քաղաքական ենթատեքստ տալու հնարավոր ենթադրություններից:

– Բողոքի ակցիան փորձ էր իրավական պրոցեսը քաղաքականացնելու, բայց ինձ թվում է՝ ՔԿ հաղորդագրությունից հետո ամեն ինչ իր տեղն ընկավ, մարդիկ հասկացան, որ քաղաքական ենթատեքստ չկա ու այս պահին մթնոլորտը մարզում խաղաղ է, – նշեց փոխմարզպետը:

ARMTIMES.COM

Գիտության եւ մշակույթի անվանի գործչի հոբելյանը

Անվանի գիտնական եւ մանկավարժ Գրիգոր Ալեքսանի Ղարիբյանը դարձավ 90 տարեկան:

Ավարտելով Սյունիքի գյուղական դպրոցը՝ նա անցել է փառավոր ճանապարհ. Երեւանի Փ. Թերլեմեզյանի անվան նկարչական ուսումնարան, Երեւանի պետական համալսարան, Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրա, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, հանրապետության մի շարք այլ բարձրագույն ուսումնական հաստատություններ եւ գիտահետազոտական կազմակերպություններ:

Հայ մտավորականության եւ, հատկապես, տնտեսագիտական դպրոցի բազմաթիվ ներկայացուցիչներ Գ.Ղարիբյանին համարում են իրենց ուսուցիչ՝ բարձր գնահատելով նրա վաստակը մարդկային կապիտալի զարգացման եւ երիտասարդ սերնդի կրթության գործում:

Պրոֆեսոր Գ.Ղարիբյանի անցած ճանապարհն արժեւորվում է իր գիտաուսումնական հետաքրքրություններին վերաբերող տնտեսագիտության հիմնախնդիրների խոր իմացությամբ, մարդկային հարաբերությունների նրբություններին տիրապետելու եւ դասավանդելու բնատուր ունակությամբ, ազգային արժեքների պահպանմամբ ու զարգացմամբ մտահոգ հայ մտավորականի նրա տեսակով:

Գ.Ղարիբյանի կյանքի 70 տարիներն անմնացորդ նվիրված են եղել մարդկային կապիտալի զարգացման եւ մեր երկրի բարգավաճմանն ուղղված հիմնախնդիրների լուծմանը:

Գիտակրթական ոլորտում ունեցած անուրանալի ծառայությունների համար ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ.Ղարիբյանը պարգեւատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով, նրան շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում: Վաստակաշատ մտավորականը եւ պատվավոր սյունեցին արժանացել է նաեւ ՀՀ Ազգային ժողովի, կառավարության, կրթության եւ գիտության նախարարության, Կենտրոնական բանկի, Գիտությունների ազգային ակադեմիայի, Երեւանի պետական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի եւ Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ոսկե մեդալների եւ մի շարք այլ պարգեւների:

Գիտական գործունեության ասպարեզում հատկապես կարեւորվում է պրոֆեսոր Գ. Ղարիբյանի կողմից դիտարկվող հիմնախնդիրների արդիականությունն ու հետազոտական մտքի խորությունը: Նրա մասնակցությամբ ու ղեկավարությամբ հրապարակված աշխատություններն ու դասագրքերը ուսումնասիրողների եւ երիտասարդների բազմաթիվ սերունդների համար դարձել են տնտեսագիտության հիմունքների յուրացման կարեւորագույն միջոց:

Մեր նորանկախ երկրում պրոֆեսոր Գ.Ղարիբյանը սահուն մուտք գործեց ազատական տնտեսական հարաբերությունների ուսումնասիրությունների ոլորտ, որն իր դրսեւորումը ստացավ ինչպես կազմակերպչական, այնպես էլ գիտահետազոտական ասպարեզներում:

Գ.Ղարիբյանը աշխատել է ՀՀ գիտակրթական հեղինակավոր կենտրոններում եւ հրապարակել է 100-ից ավելի գիտական աշխատանքներ եւ մենագրություններ: Անկախության տարիներին լինելով համալսարանի ուսումնական աշխատանքները համակարգող պրոռեկտոր՝ նա մեծապես նպաստեց մի շարք ֆակուլտետների եւ մասնագիտությունների կայացմանը:

Հատկապես մեծ է նրա ավանդը Երեւանի պետական համալսարանի կազմում տնտեսագիտության ֆակուլտետի վերաբացման գործում: Դեռեւս 1984 թ. պրոֆեսոր Ղարիբյանի ջանքերի շնորհիվ Երեւանի ժողովրդական տնտեսության ինստիտուտից տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետը տեղափոխվեց Երեւանի պետական համալսարան եւ հետագայում, որպես այդ ֆակուլտետի դեկան, նա ամեն ինչ արեց այն դարձնելու միջազգային ժամանակակից ամենաբարձր պահանջներին բավարարող տնտեսագիտության դարբնոց: Դրա զարգացմանը նպաստեց նաեւ պրոֆեսոր Ղարիբյանի կողմից տասնամյակներ շարունակ ղեկավարվող տնտեսագիտության գծով գիտական աստիճանաշնորհման մասնագիտական խորհուրդների գործունեությունը:

Գիտնականի հետազոտությունները նվիրված են անցումային տնտեսություններում բնակչության կենսամակարդակի բարձրացման, բաշխման եւ վերաբաշխման գործընթացների կարգավորման, կապիտալի նախասկզբնական կուտակման, աշխատանքի շուկայի ձեւավորման, մարդկային կապիտալի զարգացման եւ այլ հիմնախնդիրներին: Դրանք այն կարեւորագույն հարցերն են, որոնք տարբեր ուժգնությամբ կանգնում են կենտրոնացված կառավարման մոդելից ազատական տնտեսական հարաբերություններին անցնող ցանկացած երկրի առջեւ եւ որոնց լուծումը պահանջում է քրտնաջան ու հետեւողական աշխատանք:

Նշված խնդիրներին զուգահեռ, մի շարք օբյեկտիվ եւ սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, Հայաստանը կանգնեց նաեւ արտագաղթի հիմնահարցի առջեւ, որը, անշուշտ, կարող է ունենալ լուրջ բացասական ազդեցություն երկրի ազգային անվտանգության վրա: Այս հարցերի լուծումը եւս գտնվում է պրոֆեսոր Գ.Ղարիբյանի սեւեռուն ուշադրության կենտրոնում:

Պրոֆեսոր Գ.Ղարիբյանի երկարամյա եւ բարեխիղճ աշխատանքին, նրա իմաստուն խառնվածքին, մեր համոզմամբ, մեծապես նպաստել է նաեւ ընտանիքը եւ հատկապես երջանկահիշատակ տիկին Գայանեն:

Համալսարանական կյանքի հումանիզացման զարգացումներին Գ.Ղարիբյանի արդյունավետ աշխատանքը հատկապես կարեւորվել է ԵՊՀ ռեկտոր, ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանի կողմից: Վերջինիս խոսքերով՝ Գրիգոր Ալեքսանդրովիչը, որպես ԵՊՀ պրոռեկտոր, իր պարտականությունները կատարում էր առանց արհեստական բարդացումների, վայելում էր ռեկտորատի եւ համալսարանականների մեծ հարգանքը, չտրվեց ժամանակի կերպարանափոխություններին, մնաց անդավաճան ու ազնիվ: Դրա արդյունքում ընդունվեցին այնպիսի որոշումներ, ինչպիսիք են համալսարանի ֆակուլտետներում հայոց պատմության դասավանդումը, փիլիսոփայության եւ սոցիոլոգիայի, օտար լեզուների ֆակուլտետների բացումը, տնտեսագիտության ֆակուլտետի վերաբացումը եւ այլն: Հատկապես նշանակալից է նրա դերը ԵՊՀ կողմից Արցախի ազատագրական պայքարին աջակցության եւ օգնության կազմակերպման գործում:

Գրիգոր Ղարիբյանի դերը համալսարանի ուսումնական աշխատանքների համակարգման գործում բարձր է գնահատվել նաեւ Երեւանի պետական համալսարանի հաջորդ ռեկտորների կողմից:

Գրիգոր Ղարիբյանի բազմակողմանի զարգացվածության վկայությունն է նաեւ, որ նա իր էությամբ ոչ միայն կրթության ու գիտության, այլ նաեւ մշակույթի եւ գեղանկարչության վառ ներկայացուցիչ է: Ինչպես պատկերավոր նշել է արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լեւոն Չուգասզյանը՝ «յուղաներկով արված նրա ստեղծագործությունները կատարված են մասնագիտական հմտությամբ. ասես վաստակաշատ գիտնականը ողջ կյանքում միայն նկարելով է զբաղվել»: Դրա վկայություն պետք է համարել վերջինիս գեղանկարների անհատական ցուցահանդեսները, հատկապես ԵՊՀ-ի 100-ամյակին նվիրվածը: Նա գույների եւ գծերի կախարդիչ աշխարհի մարդ է, որի նկարներից մեր առջեւ հառնում են հայրենի բնության գեղատեսիլ վայրերը, նրա ժայռերն ու ծաղիկները, ամրոցներն ու հինավուրց կառույցները:

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՅՈՒ. Մ. ՍՈՒՎԱՐՅԱՆ՝
ՀՀ ԳԱԱ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ Վ.Բ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

ԵՊՀ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՎԱՐԻՉ, ՊՐՈՖԵՍՈՐ Գ. ՂԱՐԻԲՅԱՆԸ ՆՇՈՒՄ Է ԾՆՆԴՅԱՆ 90-ԱՄՅԱԿԸ

Մայիսի 25-ին լրացավ ԵՊՀ տնտեսագիտության եւ կառավարման ֆակուլտետի տնտեսագիտության տեսության ամբիոնի պատվավոր վարիչ, պրոֆեսոր Գ. Ղարիբյանի ծննդյան 90-ամյա հոբելյանը:

Պրոֆեսոր Գ. Ղարիբյանի ծննդյան 90-ամյակը շնորհավորել է ԵՊՀ ռեկտորի ժ.պ. Գեղամ Գեւորգյանը: Շնորհավորական ուղերձում Գ. Գեւորգյանը մասնավորաբար նշել է. *«Արդեն ավելի քան 70 տարի է, ինչ Դուք Երեւանի պետական համալսարանում եք: Երկարամյա եւ բարեխիղճ աշխատանքի, մարդկային իմաստուն խառնվածքի շնորհիվ Դուք, իրավամբ, վայելում եք մեծ հարգանք թե՛ համալսարանականների, թե՛ առհասարակ գիտական շրջանակում եւ՛ որպես փորձառու ու հեռատես գիտնական, եւ՛ որպես կրթության ու գիտության կազմակերպիչ, որը շատ բան է արել համալսարանի, ինչպես նաեւ հանրապետության բուհական համակարգի զարգացման համար:*

Դժվար է թերագնահատել հատկապես Ձեր անձնական ներդրումը տնտեսագիտական կրթության՝ Մայր բուհ հայրենադարձի գործում: Երեւանի պետական համալսարանի ողջ կոլեկտիվի եւ ուսանողության անունից անկեղծորեն մաղթում եմ Ձեզ քաջառողջություն, երջանկություն, բարօրություն, նորանոր հաջողություններ եւ ամենայն բարիք»:

Նշենք նաեւ, որ նախատեսվում է Գ. Ղարիբյանի ծննդյան հոբելյանը նշել 2020 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին՝ հույս ունենալով ոչ առցանց տարբերակով:

Ծննդյան առթիվ պրոֆեսորին այցելել են ԵՊՀ ռեկտորի ժ.պ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Գեւորգյանն ու Տնտեսագիտության եւ կառավարման ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Հ. Սարգսյանը, ծանոթացել են ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Գ. Ղարիբյանի ստեղծած գեղանկարներին:

Բուհ ընդունվելու համար երբ եւ ինչպես դիմել. ԳԹԿ-ից ներկայացնում են դիմում-հայտերի փոփոխությունները

Կորնավիրուսի համավարակով պայմանավորված՝ այս տարի դիմորդներն ընդունելության դիմում-հայտերն այսօրվանից սկսած մինչեւ հունիսի 15-ը պետք է ուղարկեն առցանց տարբերակով: Առցանց գրանցման համակարգից օգտվելու համար պետք է այցելեն dimord.am կայք եւ, գրանցվելով համակարգում, լրացնեն դիմում-հայտը: Գնահատման եւ թեստավորման կենտրոնի տնօրենի տեղակալ Կարո Նասիբյանը տեղեկացրեց, որ համակարգում արդեն 200 հոգի մուտք են գործել, ուսումնասիրում են ու փորձում գրանցվել, իսկ 40-ն արդեն վերջնական հաստատել է իր դիմում-հայտը:

Գնահատման եւ թեստավորման կենտրոնի տնօրենի տեղակալն ասաց, որ առցանց տարբերակով կարող են դիմել միայն այն դիմորդները, որոնք ՀՀ ուսումնական հաստատություններ են ավարտել: Օտարերկրյա ուսումնական հաստատություններ ավարտած դիմորդները պետք է մայիսի 25-ից մինչեւ հունիսի 15-ն այցելեն Գնահատման եւ թեստավորման կենտրոն: Ասաց՝ չեն կարող, օրինակ, մոսկվայաբնակին հայտագրել առանց նրան ու փաստաթղթերը տեսնելու:

Նասիբյանը տեղեկացրեց, որ այս տարի կարեւոր փոփոխություն է եղել դիմում-հայտերում: Եթե նախկինում առաջին անվճար հայտն է եղել գերակա, հիմա անվճարին գումարվում է նաեւ վճարովին:

«Դիմորդը, ենթադրենք, դիմել է իրավագիտություն մասնագիտության համար, ուրեմն՝ առաջին տողով գրելու է եւ՛ վճարովի, եւ՛ անվճար: Այդտեղից դուրս մնալու դեպքում նա երկրորդ, երրորդ, չորրորդ եւ այլ հայտերով կարող է ընդունվել միայն այն դեպքում, եթե այդ երկրորդ, երրորդ, չորրորդ տեղերում գրված

Կարեն Համբարձումյան. «Թող ոչ մեկը չփորձի Սյունիքն օգտագործել իր ոչ օրինական եւ ոչ պետական ծրագրերի, անձնական ամբիցիաների համար»

Սկիզբը՝ էջ 2

պաշտպանելու քայլեր ձեռնարկել: Առայժմ ձեռնպահ եմ մնում անուններ տալուց, բայց կգա ժամանակը, եւ կհնչեն հստակ անուններ՝ ով ինչ գործառույթներ էր իրականացրել քաջարանցիների բողոքի ակցիան կազմակերպելու եւ իրականացնելու համար:

Ի դեպ, նաեւ ոստիկանության գործառույթների տիրույթում՝ պարզել՝ ակցիան ինքնաբո՞ւխ էր, թե՞ ոչ:

– Եվ, այդուհանդերձ, ըստ ակցիայի մասնակիցների՝ ոստիկանություն բերված չորս անձինք բռնության են ենթարկվել: Միգուցե այս փա՞ստն է հիմք ծառայել, որ պահանջում էին նախաքննությունը Սյունիքում իրականացնել եւ ոչ թե Երեւանում:

– Ինձ հասած տեղեկություններով՝ բռնություն է տեղի ունեցել մի քաղաքացու հանդեպ. այդ հարցով ՀՀ ոստիկանապետը ծառայողական քննություն է նշանակել, եւ, համոզված եմ, ճշմարտությունը ջրի երես դուրս կգա:

Քանիցս նշել եմ, որ մեր քաղաքական թիմը, «Իմ քայլը» դաշինքի պատգամավորներն ուղիղ են նայում իրենց ընտրողների աչքերի մեջ: Նախաքննության գործընթացը սկսված է, հետեւողական ենք լինելու, որ այն իրականացվի գործող օրենսդրությանը խիստ համահունչ:

– Մայիսի 24-ին սոցիալական ցանցերում հանդիպում էինք մտքեր, թե իբր Սյունիքում զանգվածային ձերբակալություններ են տեղի ունենում, ոտքի է կանգնել ողջ մարզը, Կապանում լարված իրավիճակ է եւ այլն:

– Նախ՝ Սյունիքում զանգվածային ձերբակալություններ տեղի չեն ունեցել, մարզը ոտքի չի կանգնել, ակցիայի մասնակիցների՝ իրենց միանալու կոչը՝ ուղղված կապանցիներին, գորիսեցիներին, սիսիանցիներին, մեղրեցիներին, ամբողջովին անպատասխան է մնացել:

Ձեր հարցը նույնպես հաստատում է այն ճշմարտությունը, որ հավաքն ինքնաբուխ չի եղել եւ այլ նպատակ է հետապնդել:

Սյունեցին իր էությամբ պետականամետ է, ամուր կանգնած է իր հողին, ինչը հաստատված է դարերի պատմությամբ: Եվ սյունեցիների հետ նման խաղեր կազմակերպելն անպտուղ գործ է:

Ինչ վերաբերում է մամուլի նմանատիպ հրապարակումներին... Բոլորս գիտենք, թե այդ լրատվամիջոցները որտեղից են ղեկավարվում եւ ինչ միջոցներով: Կգա ժամանակը, եւ այն հեռու չէ, ամեն ինչ իր տեղը կընկնի...

Չպիտի լինի հրապարակում, որ անհավաստի լինի եւ մնա անպատասխան ու անարձագանք:

Մեր ճանապարհը մեկն է՝ գործել հանուն Հայաստանի Հանրապետության եւ նրա քաղաքացու շահերի:

Սյունյաց աշխարհը կանգնած է հեղափոխության ակունքներում եւ քայլում է այն ճանապարհով, որ որդեգրել ենք 2018 թվականին:

Ինձ դուր եկավ մարզի ոստիկանության զսպվածությունն ու համբերատարությունը ստեղծված իրավիճակում: Այնպես որ՝ գնահատում եմ մարզի ոստիկանության գործելակերպը մայիսի 24-ին ստեղծված չափազանց բարդ իրավիճակում:

– Վերջին օրերին մայրաքաղաքային որոշ լրատվամիջոցներ անընդհատ քննարկում են Սյունիքի համայնքապետերի հարցը, թե իբր նրանց հանդեպ քաղաքական հետապնդում է իրականացվում: Եվ այդ հրապարակումների մեջ քանիցս թացը խառնվում է չորի հետ:

– Նախ՝ որեւէ համայնքապետի հանդեպ Սյունիքում քաղաքական հետապնդում չի իրականացվում: Ինչ վերաբերում է թացը չորից զատելուն, ապա վաղուց այդ հարցում եւս Սյունիքում ամեն ինչ պարզ է... Օրինակ, ինչպես կարելի է հիացմունքով չարտահայտվել Կապանի համայնքապետ Գեւորգ Փարսյանի գործունեության մասին: Ընդ որում՝ դա միայն իմ գնահատականը չէ, կապանցի ընտրողների հետ հանդիպման ժամանակ հաճախ եմ նրա մասին դրական կարծիքներ լսում:

– Ձե՞ք կարծում, որ, այդ բոլորով հանդերձ, բացակայում է սյունիքյան իրողություններն իրենց անուններով կոչելու համապետական համարձակությունը:

Խոսքը, նախեւառաջ, Քաջարանի կոմբինատի սեփականատերերին է առնչվում: Հիմնական սեփականատերը, ով ունեցել է 75 տոկոս բաժնեմաս, այն է՝ գերմանական «Քրոնիմետ» ընկերությունը (նախագահ՝ Գյունտեր Պիլարսկի) մեկ-երկու ամիս առաջ միանգամից անհետացել է բաժնետերերի ցանկից: Եվ ոչ ոք անհանգստացած չէ, որ Հայաստանում օտարերկրացի ամենախոշոր ներդնողներից մեկն անհետացել է Քաջարանից:

– Այդ հարցի առնչությամբ գրավոր հարցում կանեմ, որպեսզի պատասխանս հիմնավոր լինի: Ունեմ իմ տեսակետը, որոշակի տեղեկատվության տիրապետում եմ, բայց, կարծում եմ, ճիշտը հարցն օբյեկտիվորեն ուսումնասիրելն է:

– Ոմանք այս օրերին, օգտվելով առիթից, մայրաքաղաքից փորձեցին պիտակավորել մեր երկրամասը՝ «հեղափոխության որջ» եւ այլն:

– Ես դատապարտում եմ նման հայտարարությունները:

Դրանք անպատասխանատու հայտարարություններ են եւ Սյունիքի հետ որեւէ առնչություն ունենալ չեն կարող:

Նման հայտարարություններ կարող են անել Սյունիքը եւ սյունեցիներին չճանաչողները, ինչպես եւ նրանք, ովքեր փորձում են այս իրավիճակն օգտագործելով իրենց կայանալու խնդիրը լուծել:

– Երկրորդ օրն է, ինչ Կապանի փողոցներում ոստիկանական խմբեր են պահակային-պարեկային ծառայություն իրականացնում, այն էլ՝ մեծ թվով: Երեւում է՝ այլ տարածքներից այցելած ոստիկաններ են:

Կա՞ դրա անհրաժեշտությունը:

– Տեղական ուժերը, կարծում եմ, կարող են մարզում ինքնուրույն ապահովել պատշաճ կարգ ու կանոն:

– Ձեր խոսքը Սյունիքի ընտրողներին, հատկապես Կապանի եւ Քաջարանի ընտրողներին:

– Չէի ցանկանա տարանջատել՝ Կապան, Քաջարան, մարզի մյուս բնակավայրերը: Սյունիքն ինձ համար մի հասկացություն է: Կխնդրեմ իմ հարազատ սյունեցիներին, որ չգործեն պահի ազդեցության տակ, որ իրավիճակի տերը լինեն եւ թույլ չտան, որ ոմանք իրենց անձնական շահերի մղումով մարդկանց օգտագործեն: Գուցե որեւէ մեկը նեղսրտի, որ խոսքս այսպես ձեւակերպեցի, բայց ուզում եմ իմ համերկրացիներին այդպես տեսնել:

Հիշո՞ւմ եք Նժդեհի խոսքը՝ Սյունիքը Հայաստանի ողնաշարն է... Սյունիքը համահայկական երեւույթ է եւ անգերազանցելի իրողություն ոչ միայն հազարամյակների կտրվածքով, այլեւ այսօր՝ Հայաստանի երրորդ հանրապետությունում:

– Կարելի՞ է համարել, որ մայիսի 24-ին տեղի ունեցածն արդեն անցյալ է:

– Կարծում եմ՝ այո, թեեւ պետք է հանգամանալից ուսումնասիրել դրա կազմակերպման եւ իրականացման մանրամասները, որպեսզի ավելի ողջամիտ եզրակացության հանգենք:

Բոլոր դեպքերում մերժելի է երեւույթը, երբ մարդիկ փորձում են պղտոր ջրում ձուկ որսալ, դեռ ավելին՝ շնաձուկ:

Հաստատապես համոզված եմ, որ այդ ամենն իրոք անցյալում մնացել: Բայց եթե, այնուամենայնիվ, նույն ուժերը փորձեն խարխլել Հայաստանի Հանրապետության, այդ թվում՝ Սյունիքի անվտանգությունը, կայունությունը, համարժեք եւ իրավաչափ պատասխանի կարժանանան:

Թող ոչ մեկը չփորձի Սյունիքն օգտագործել իր ոչ օրինական եւ ոչ պետական ծրագրերի, անձնական ամբիցիաների համար:

ԶՐՈՒՅՑԸ՝ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ
26 ՄԱՅԻՍԻ 2020Թ.

մասնագիտություններում թափուր տեղեր կան»,- ասաց Նասիբյանը:

Դիմորդը նախկինում անվճարից դուրս էր մնում, եւ վճարովիի համար մրցում էին միավորները: Նասիբյանը բացատրեց, որ եթե միավորով տեղավորվում էր, օրինակ, իրավագիտությունում, նորմալ էր, իսկ եթե չէր տեղավորվում, ապա երկրորդում միջազգային հարաբերություններ նշած լինելու դեպքում պայքարում էր այնտեղի վճարովիի համար:

«Եթե ինքը ունենում էր ավելի բարձր միավոր, քան միջազգային հարաբերություններ դիմածը, ապա հանում էր իրեն էնտեղից: Ինքը միջազգային հարաբերությունների դիմողին էր իր միավորով հանում, նա էլ՝ արեւելագետին, պատմաբանին, եւ այդպես ստացվում էր, որ դիմորդը չի ընդգրկվում իր ընտրած մասնագիտության մեջ, հայտնվում է մի տեղ, որտեղ, մեղմ ասած, չի էլ ուզում, բայց այնքան որ գրել էր»,- նշեց ԳԹԿ փոխտնօրենը: Նա տեղեկացրեց, որ այժմ բոլոր առաջին հայտերն ընդունվելու են: Օրինակ՝ հնարավոր է՝ պատմականը ընդունվի 12 միավորով, բայց 4-րդ հայտում պատմության ֆակուլտետ նշողը 15 միավորով դուրս մնա թափուր տեղ չմնալքու պատճառով:

Նախկին երկու, երեք քննությունների փոխարեն մեկ առարկայով քննության անցկացումը եւս պայմանավորված է համավարակի ստեղծած պայմաններով: Նասիբյանը տեղեկացրեց, որ մրցույթի կազմակերպման համար նաեւ լրացուցիչ գնահատականներ են ներառում: Դրանք դիմորդի ատեստատի ավարտական կամ տարեկան գնահատականներն են եւ ատեստատում ներառված պետական ավարտական քննությունների միավորները:

ԳԹԿ տնօրենի տեղակալը ներկայացրեց, որ ԿԳՄՍ նախարարությունը նպատակահարմար է գտել այն առարկան, որը տվյալ բուհի եւ տվյալ մասնագիտության համար շատ կարեւոր առարկա է: Օրինակ՝ տնտեսագիտական ֆակուլտետում մաթեմատիկա, իրավագիտությունում պատմություն առարկան է ընտրվել:

Դիմում-հայտը լրացնելիս դիմորդից պահանջվում են նաեւ ընտրել միասնական կամ ներբուհական առարկաները: Նասիբյանը հիշեցրեց, որ ներբուհականն այն քննություններն են, որոնք կազմակերպվում են տվյալ բուհում, կենտրոնացված չեն եւ ոչ միասնական են համարվում: Օրինակ՝ կոնսերվատորիայի, գեղարվեստի ակադեմիայի եւ արվեստի, մշակույթի սպորտի բնագավառի կրթական այլ հաստատությունները: Նշեց նաեւ, որ ներբուհական քննություն կա նաեւ, օրինակ, Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ռեժիսուրայում:

Հիշեցնենք, որ ընդունելության քննությունները տեղի կունենան հուլիսի առաջին տասնօրյակում:

//

Իբր ցրտահարությունը քիչ էր, հիմա էլ՝ լվիճը

Արդեն որերորդ տարին ապրիլյան ցրտահարությունն անդառնալի վնաս է հասցնում աշնանացանին, վաղաժամ ծաղկած ծառերին, մանավանդ, կորիզավոր պտուղների: Այս ապրիլին եւս ցրտեր եղան, ջերմաստիճանն իջավ զրոյից ցածր: Ինչպես տեղեկացանք Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետ Գագիկ Խաչատրյանից, այս ապրիլյան ցրտահարությունից աշնանացանը, բարեբախտաբար, քիչ է տուժել, ավելի ստույգ՝ 10-15 տոկոսով: Թե՛ հարավային, թե՛ բարձրադիր գոտիներում ավարտվել են աշնանացանի սնուցման աշխատանքները: Մարզում կատարվել է 7-7,5 հազար, ազատագրված տարածքներում՝ 14-14,5 հազար հեկտար աշնանացան, ընթացքի մեջ է գարնանացանը:

Ընդհանուր առմամբ մարզ է ներկրվել 1135 տոննա ազոտական պարարտանյութ, որից 450 տոննան՝ Իրանից: Մյուս մասը վրացական արտադրության է: Գյուղվարչության պետի՝ մեր նախորդ զրույցի ընթացքում *(«Սյունյաց երկիր», 26 մարտի, 2020թ.)* նա նշել էր, որ, մասնավորապես, խնդիրներ են առաջացել վրացական արտադրության ազոտական պարարտանյութի ներկրման հետ, կապված հաղորդակցության ուղիների հետ: Այս անգամ մեր զրուցակիցը փոխանցեց, որ մայիսի 3-ից սկսած վրացական արտադրության պարարտանյութը ներկրվել է հանրապետություն, այն տնտեսություններն ու անհատ անձինք, ովքեր նախապես վճարել էին պարարտանյութի դիմաց, ստացել են իրենց չափաբաժինը: Այժմ համայնքներում պարարտանյութի ազատ վաճառք է, պարկը՝ 8-9 հազար դրամի սահմաններում:

Աշնանացանի ցրտահարության հետ կապված, եթե այս գյուղատնտեսական տարում առանձնապես խնդիր չառաջացավ, ապա մի այլ հարց է ծագել՝ լվիճներն են ակտիվացել, ինչը բավականին վնաս է հասցրել աշնանացան մշակաբույսերին: Գ. Խաչատրյանի փոխանցմամբ՝ Գորիսի տարածաշրջանում ավարտվել են լվիճի եւ այլ գյուղատնտեսական վնասատուների դեմ պայքարին միտված միջոցառումները, այժմ նույնն իրականացվում է Սիսիանի տարածաշրջանում:

Սկսվել է նաեւ անասունների տեղափոխումը դեպի բարձրադիր արոտավայրեր (յայլաղներ): Գ. Խաչատրյանը տեղեկացրեց, որ երկրորդ տարին է, ինչ կառավարության առջեւ հարց են բարձրացրել անասունների՝ դեպի հեռագնա արոտավայրեր տեղափոխելու հետ կապված: Սարերով դեպի յայլաղ գնացող ճանապարհներ են նախատեսել, որի վերաբերյալ պաշտոնական գրություններն ուղարկվել են ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն, Տեղ եւ Գորիս համայնքների համար նախատեսված անցակետերի նախագծերի եւ նախահաշիվների ուղղությամբ աշխատանքները տարվել են, ընդ որում՝ անցակետեր են նախատեսված նաեւ, մեկը՝ Կապանի, երկուսը՝ Սիսիանի տարածաշրջանում, որտեղ գրանցվում եւ փաստաշրջանառվում է անասունների շարժը ամբողջությամբ, վերահսկվում է անասունների շարժը, ընդ որում՝ ճանապարհին 10-12 կմ անցնելուց հետո կանգառներ են ստեղծվում՝ գիշերակացի համար:

Գյուղվարչության պետից հետաքրքրվեցինք, թե մարզում ինչքան վարելահող չի մշակվում: «Չմշակվելը մի քիչ պայմանական է, հակադարձեց նա, մարդ կա, երկու-երեք տարին մեկ է մշակում հողը, ինչի դեպքում չի կարելի ասել չմշակվող հող: Խնդիր կա Գորայքի բարձրադիր գոտում, որտեղ վարելահողերն օգտագործվում են որպես խոտհարք: Եթե այդ

Շարունակությունը՝ էջ 8

Հայաստանում օտարերկրյա ամենախոշոր ներդրողներից մեկը՝ Գյունտեր Պիլարսկին, հանկարծակի անհետացել է Քաջարանից, իսկ թե ում է անցել նրա գլխավորած «Քրոնիմետ»-ի 75 տոկոս բաժնեմասը, հայտնի չէ

2020 թ. մայիսի 2-ին Սիվիլնեթը (Մկրտիչ Կարապետյանի ստորագրությամբ) հրապարակեց հոդված՝ «Բաժնետերերի նոր փոփոխություններ Զանգեզուրի պղնձամոլիբդենայինում. «Քրոնիմետ»-ը սեփականատերերի ցանկում այլեւս չկա» վերտառությամբ:

Հոդվածը ցնցող բացահայտում էր արել՝ *«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում (ԶՊՄԿ) 75 տոկոս մասնակցություն ունեցող գերմանական «Քրոնիմետ» ընկերությունների խումբը որեւէ կերպ ընկերության իրական սեփականատերերի ցանկում չի արտացոլվում: Ըստ ամենայնի՝ գերմանական ընկերությունը դադարել է լինել ԶՊՄԿ բաժնետեր: Սա պարզ է դառնում ԶՊՄԿ-ի՝ իրական սեփականատերերի հայտարարագրի ուսումնասիրությունից»:*

Հոդվածում այնուհետեւ նշվում է՝ *«ԶՊՄԿ-ի իրական սեփականատերերի հայտարարագրում զարմանալիորեն չենք հանդիպում ոչ ընկերությունում առյուծի բաժին տնօրինող «Քրոնիմետ»-ի, ոչ էլ «Քրոնիմետ»-ի սեփականատեր Պիլարսկիների անվանը: Նույնիսկ միջանկյալ կազմակերպությունների ցանկում «Քրոնիմետ»-ը բացակայում է:*

2019-ին կոմբինատը ներկայացրել էր ընկերության բաժնետիրական կառուցվածքը, որում գերմանական ընկերությունն անուղղակիորեն տնօրինում էր կոմբինատի 75 տոկոսը՝ Գյունտեր, Յուրգեն, Էլկե, Յոակիմ Պիլարսկիների մասնակցությամբ:

Իրական սեփականատերերի նոր ցանկում Պիլարսկիներից որեւէ մեկի անունը չկա: «Քրոնիմետ»-ի խմբի ընկերություններին եւս չենք հանդիպում»:

* * *

Այս հրապարակումից հետո ակնհայտ դարձավ, որ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր սեփականատերը (բաժնեմասերի 75 տոկոսի տերը) անհետացել է Քաջարանից:

Այդ հրապարակմանը հաջորդած մեկ ամսվա ընթացքում որեւէ մեկը (պատկան մարմիններից) բացատրություն չտվեց հայ հանրությանը, թե Հայաստանի ամենախոշոր հանքարդյունաբերական ձեռնարկության գլխավոր սեփականտերն ինչո՞ւ կամ ի՞նչ հանգամանքների արդյունքում է անհետացել Քաջարանից. փախե՞լ է, փախցրե՞լ են, բաժնեմասերը խլե՞լ են, բաժնեմասերը վաճառե՞լ է, նվիրե՞լ է…

Օտարերկրյա ներդրումների մեծ կարիք ունեցող մեր հանրապետությունում խոշոր ներդրողներից մեկի հանկարծակի անհետանալը, անշուշտ, սովորական երեւույթ չէ:

Բայց առավել զարմանալին այն է, որ ՀՀ կառավարությունը, ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանատունը զարմացած չեն եւ, կարծեք, փորձում են հանրության ուշադրությունից դուրս թողնել սեփականության ոչ սովորական այդ վերաբաշխման փաստը:

Դեռեւս 2020 թ. հունվարի 25-ի կապանյան ասուլիսում ՀՀ վարչապետը վերստին կարեւորեց մեկ տարի առաջ կոմբինատի գլխավոր սեփականատիրոջ հետ ունեցած հանդիպումը, որի ժամանակ կողմերը պայմանավորվել են քաջարանյան հանքարդյունաբերությունը համապատասխանեցնել այն չափանիշներին, ինչ չափանիշով գործում են լեռնահանքային ձեռնարկությունները Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում:

Մինչդեռ… պարզվում է, որ այլեւս չկա գլխավոր սեփականատերը, ով խոստումներ էր տվել Հայաստանի նոր կառավարությանը, ում հետ պայմանավորվել էր վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Այնպես որ՝ Գյունտեր Պիլարսկին Հայաստանից անհետացել է՝ չկատարելով երկրի վարչապետին տված խոստումները, չվերացնելով բնապահպանական ահռելի պրոբլեմները, որ գլխավոր սեփականատերը (Քաջարան հանքավայրի անփույթ եւ անխնա) շահագործման հետեւանքով պատճառել է մեր երկրամասին՝ բազմաթիվ ռիսկեր ստեղծելով տեղի բնակչության կյանքի եւ առողջության համար:

Ոչ պակաս կարեւոր է նաեւ հետեւյալ հարցը՝ ո՞ւմ կամ ո՞ր ընկերությունների խմբին է անցել Գյունտեր Պիլարսկու գլխավորած «Քրոնիմետ» ընկերության 75 տոկոս բաժնեմասը:

Քաջարանի կոմբինատի գլխավոր սեփականատիրոջ հանկարծակի անհետանալը, վերը շարադրվածով հանդերձ, առաջացնում է այլ հարց եւս. 2004-ին մոտ 180 մլն դոլարով վաճառված կոմբինատի 75 տոկոս բաժնեմասը ժամանակին արժեցել է 135 մլն դոլար (բաժնեմասերի 60 տոկոսը ձեռք է բերել 2004-ին, 15 տոկոսը՝ հետագայում):

Եվ ուրեմն՝ ո՞վ է հայաստանյան այն օլիգարխը կամ սեփականատերը (ինչպես ընդունված է հիմա ասել), որ ի վիճակի է եղել առնվազն 135 մլն դոլարով ձեռք բերել այդ ունեցվածքը:

Քաջարանի կոմբինատի նոր գլխավոր սեփականատիրոջ բացահայտումը ոչ միայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության հրամայականներից է:

Այդ հարցը առանձնահատուկ կարեւորություն է ներկայացնում հատկապես Սյունիքի համար. երկրամասի արդյունաբերության մոտ 80 տոկոսի գլխավոր սեփականատիրոջից է մեծապես կախված Սյունիքի մարզի սոցիալ-տնտեսական եւ հոգեւոր-մշակութային կյանքի վաղվա օրը:

Եվ ուրեմն՝ ո՞վ է «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ նոր գլխավոր սեփականատերը, ով տնօրինում է ընկերության բաժնետոմսերի առնվազն 62,5 տոկոսը (32,5 տոկոսի բիրդան-սեփականատերերին կանդրադառնանք առանձին հրապարակմամբ):

* * *

«Սյունյաց երկրի» 2017 թ. նոյեմբերի 9-ի N36 (454)-ում լույս էր տեսել մի հոդված՝ այսպիսի վերտառությամբ՝ *«Ծերուկ Պիլարսկին ի վերջո հասկացել է, որ խաբված է, եւ այն մասին, թե ինչպես էր Պետրոս Մեծ կայսրն առանց դատ անելու գլխատում հույժ կարճահասակներին»:*

Հոդվածը տեղեկացնում էր, որ «երկարատեւ լռությունից հետո կոմբինատ է այցելել «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ բաժնետոմսերի մոտ 60 տոկոսի սեփականատեր գերմանական «Քրոնիմետ» ընկերության ղեկավար Գյունտեր Պիլարսկին՝ որդու ուղեկցությամբ:

Ծերուկ Պիլարսկին, պարզվում է, առաջացած տարիքի պատճառով այլեւս ի վիճակի չէ նախկին ակտիվությամբ ու հետեւողականությամբ զբաղվել իր ձեռնարկություններից մեկի՝ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ գործերով: Բայց նրան, այդուհանդերձ, մի քանի հարց է հետաքրքրել, որոնք վերջին հաշվով անպատասխան են մնացել:

Օրինակ, ինչպե՞ս է ստացվել, որ հանքաքարի հանույթի ծավալի մոտ երեք անգամ ավելացման դեպքում կոմբինատը գրեթե զրկվել է շահույթից եւ նոր կառավարիչների օրերում (երեք տարի շարունակ) բաժնետերերը համարյա թե շահույթ չեն ստացել…

Պիլարսկու որդուն էլ զարմացրել է կոմբինատի վարչական շենքում հանգրվանած ձրիակերների այդքան մեծ նախիրը…»:

Ըստ այդ հրապարակման՝ այցից հետո Պիլարսկին որոշել է վաճառքի հանել իր բաժնեմասը:

Հոդվածը հետաքրքիր վերջաբան ունի՝ *«Քաջարանի կոմբինատում Վահե պատահականության ջանքով ստեղծված վիճակը պատասխանում է նաեւ երեք հարյուր տարի շարունակ պատմաբաններին մտահոգող մի հարցի եւս՝ ինչո՞ւ էր Պետրոս Մեծ իմաստուն կայսրն առանց դատ անելու գլխատում հույժ կարճահասակներին»:*

Հ.Գ.1 // Արդյո՞ք քաջարանյան վերջին իրադարձությունները որեւէ աղերս ունեն ԶՊՄԿ-ի բաժնեմասերի՝ վերջին ամիսներին կատարվող վերաբաշխման հետ:

Հ.Գ. 2 // Իսկ միգուցե Գյունտեր Պիլարսկի կամ «Քրոնիմետ» անվամբ սեփականատեր ընդհանրապե՞ս գոյություն չի ունեցել, այլ եղել է Գյունտեր Պիլարսկի բեմական դեկորացիա:

Հ.Գ. 3 // Հայաստանի էկոնոմիկայի համար պատասխանատուները չե՞ն վախենում, որ Պիլարսկու (դեռեւս չպարզաբանված հանգամանքներում) սեփականազրկումը կարող է ավելի զգուշավոր դարձնել օտարերկրյա ներդնողներին, ովքեր ծրագրեր ունեն մեր հանրապետությունում կատարելու ներդրումներ: Առավել եւս, որ Զանգեզուրի պղնձամոլիբդենայինում սեփականազրկման եւ սեփականության վերաբաշխման գործընթացներ են տեղի ունեցել նաեւ դրանից առաջ՝ 2014-19 թթ.: Ընդ որում՝ մինչեւ այժմ պետական եւ իրավական գնահատական չի տրվել 2014-ից հետո կատարված սեփականազրկման գործընթացին:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»

ԶՊՄԿ-ի պոչատարի հայտնի վթարի քրգործով համալիր փորձաքննություն է նշանակվել, հարցաքննվել են աշխատակիցներ

Անցյալ տարվա հոկտեմբերի 17-ին Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի պոչատարի վրա գրանցված վթարի եւ դրա հասցրած վնասի վերաբերյալ հարուցված քրգործը դեռեւս նախաքննության փուլում է, նշանակվել է համալիր փորձաքննություն, հարցաքննվել են ԶՊՄԿ-ի ու ԱԻՆ-ի մի շարք աշխատակիցներ: Այս մասին «Հետքին» հայտնել է գլխավոր դատախազության հանրային կապերի բաժնի պետ Արեւիկ Խաչատրյանը:

Հիշեցնենք, որ 2019-ի հոկտեմբերի 17-ին «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի պոչատարի՝ Ներքին Գիրաթաղ բնակավայրի հատվածում տեղի էր ունեցել վթար, ինչի հետեւանքով պոչանքները լցվել էին Ողջի գետ:

Հոկտեմբերի 31-ին գլխավոր դատախազությունը հաղորդագրություն էր տարածել, հայտնելով, որ ԶՊՄԿ-ի խողովակաշարի վնասման եւ թափոնաջրերով Ողջի գետի աղտոտման դեպքի առթիվ Սյունիքի մարզային դատախազությունում հարուցվել է քրեական գործ՝ ՔՕ 284-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով՝ վտանգավոր քիմիական եւ կենսաբանական նյութերի եւ թափոնների հետ վարվելու անվտանգության կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է շրջակա միջավայրի աղտոտում, պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը 5 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով կամ առանց դրա:

Ա. Խաչատրյանը նաեւ տեղեկացրել է, որ նախաքննությունը կատարում է ՀՀ քննչական կոմիտեն, իսկ վերահսկողությունն իրականացնում է գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունը:

Հիշեցնենք, որ վթարի նույն օրը այն քննարկվել էր կառավարության նիստում: Արտակարգ իրավիճակների նախարար Ֆելիքս Ցոլակյանը, մասնավորապես, հայտնել էր, որ կոմբինատը պատկան մարմիններից գաղտնի է պահել վթարի փաստը՝ փորձելով սեփական ուժերով վերացնել այն: Շրջակա միջավայրի այն ժամանակվա նախարար Էրիկ Գրիգորյանն էլ հայտնել էր, որ Ողջի գետից փորձանմուշներ են վերցվել:

Հետագայում «Հետքը» ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնից հետաքրքրվել էր, թե 2018-2019 թթ. տեսչական մարմնի կողմից ԶՊՄԿ-ի վթարների քանի դեպք է արձանագրվել, եւ քանի անգամ է կատարվել նմուշառում: Հարցրել էինք նաեւ, թե արձանագրված վթարներից հետո ինչ քայլեր են ձեռնարկվել տեսչական մարմնի կողմից, քանի անգամ է տուգանք կիրառվել:

Պարզվել էր, որ 2 տարվա ընթացքում ընդամենը 2 վթար է արձանագրվել, որոնցից մեկը եղել է 2019-ի հուլիսի 7-ին: ԶՊՄԿ-ին պատկանող պոչատարի առաջին դյուկերի խողովակաշարի հանգույցում տեղի ունեցած վթարից հետո տեսչական մարմնի կողմից հարուցվել էր վարչական վարույթ: Դրա շրջանակներում Գեղի գետից իրականացվել էր ջրի նմուշառում եւ ուղարկել անալիտիկ հետազոտության: Արձանագրվել էր 5,014 տոննա կախյալ նյութերի արտահոսք: ԶՊՄԿ-ի նկատմամբ նշանակվել էր վարչական տուգանք՝ 100 հազար դրամի չափով, ինչպես նաեւ ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետեւանքով պատճառված վնասի հատուցման պահանջ՝ 79 հազար դրամ:

Երկրորդ վթարը հոկտեմբերին տեղի ունեցածն էր, որն այսօր սպասում է ոչ թե վարչական, այլ քրեական հանգուցալուծման:

//

Էդգար Թոխսանց. «Կարծում եմ՝ պետական մակարդակով արժեր մտահոգվել գյուղատնտեսության համար հույժ կարեւոր՝ անասնաբույժի մասնագիտության գրավչությունը բարձրացնելու խնդրով»

Անասնաբուժական աշխատանքի մոտ 50 տարվա կենսափորձ ունեցող Էդգար Թոխսանցը 1995-2000 թթ. գլխավորել է Սյունիքի մարզի անասնաբուժական ծառայությունը, 2005-11 թթ. ղեկավարել է Սննդամթերքի անվտանգության եւ անասնաբուժական պետական տեսչության Սյունիքի մարզային կառույցը, 2011 թվականից «Անասնաբուժասանիտարիայի եւ բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի Սյունիքի մարզային ծառայության պատասխանատուն է:

Ճանաչված անասնաբույժ Էդգար Թոխսանցից փորձեցինք իմանալ բնագավառին առնչվող եւ հանրությանը հետաքրքրող մի քանի հարցի պատասխան:

– Պարոն Թոխսանց, նախ կուզենայինք պատկերացում կազմել «Անասնաբուժասանիտարիայի եւ բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի Սյունիքի մարզային լաբորատորիայի մասին, որի ղեկավարն եք Դուք:

– Ձեր իսկ նշած ՊՈԱԿ-ի Սյունիքի մարզային կառույցն է մեր լաբորատորիան, գտնվում է Գորիս քաղաքում, մասնաճյուղ ունի Կապանում:

Հիմնականում զբաղվում ենք գյուղատնտեսական կենդանիների բրուցելյոզի հետազոտությամբ:

Լաբորատորիայում աշխատում է յոթ մասնագետ, իսկ ամռանը եւ աշնանը, պայմանավորված աշխատանքների ծավալի մեծացմամբ, ավելանում է աշխատողների թիվը:

Միեւնույն ժամանակ խորհրդատվություն ենք իրականացնում անասնատերերի շրջանում՝ հիվանդությունների կանխարգելման հարցերով, թեեւ դա մեր գործառույթների մեջ չի մտնում:

Ասեմ նաեւ՝ մեր աշխատանոցը հանրապետության լավագույն լաբորատորիաներից է: Այն հագեցած է ամենաարդիական սարքավորումներով: Դրանք ճիշտ եւ արդյունավետ գործածելու նպատակով աշխարհի մի քանի երկրներում մասնակցել ենք միջազգային դասընթացների:

– Փորձենք գնահատել բրուցելյոզի հետ կապված վիճակը Սյունիքում:

– Վիճակը բարվոք է, բռնկումներ չունենք մարզում:

Իհարկե, ժամանակ առ ժամանակ ի հայտ են գալիս հատուկենտ հիվանդ անասուններ, ինչի մասին անմիջապես տեղեկացնում ենք անասնաբուժական տեսչական մարմնին, որն էլ ձեռնարկում է համապատասխան միջոցառումներ:

– Սովորաբար մայիս ամսվա վերջին օրերին ու հունիսի սկզբին եւ մարզի հարավային գոտուց, եւ Արցախի Հանրապետության տարածքից ոչխարի հոտերը, կովերի նախիրները տեղափոխվում են Սյունիքի հեռավոր եւ բարձր լեռնային արոտավայրեր:

Ավանդաբար հեռավոր արոտավայրեր տեղափոխվող անասունների վիճակը՝ այդ նպատակով հիմնված անցակետերում ստուգվել է անասնաբուժական ծառայության կողմից, որից հետո է միայն թույլատրվել խոշոր եւ մանր եղջերավոր անասունների տեղափոխումը:

Իսկ հիմա՞... Հիմա նույնպե՞ս իրականացվում է կանխարգելիչ այդ միջոցառումը:

– Դա տեսչական մարմնի լիազորությունների մեջ է մտնում, այդ մարմնի ղեկավարները կարող են հիմնավոր պատասխան տալ Ձեր հարցին:

Ես միայն հետեւյալը կասեմ. տեղափոխվող անասունների վերաբերյալ (ըստ նախիրների, հոտերի, երամակների) տրվում է անասնաբուժական N 1 ձեւը (տեսչությունն է տալիս):

Այդ փաստաթուղթը տեղեկություններ է պարունակում այն մասին, թե տվյալ հոտում կամ նախիրում ինչ պատվաստումներ են արված, ինչ հետազոտություններ են կատարված: Փաստաթղթում նշվում է նաեւ հարցի պատասխանը՝ արդյո՞ք հոտը կամ նախիրն ապահով տարածքից են տեղափոխվում, թե՞ ոչ:

Միայն այդ հարցերի հստակ եւ դրական պատասխանի դեպքում կարող են անասուններն անարգել տեղափոխել հեռավոր եւ բարձր լեռնային արոտավայրեր:

– Ո՞վ է, այնուամենայնիվ, անասնաբուժական ծառայության հիմնական պատասխանատուն մարզում:

– Մարզի ամեն մի տարածաշրջան ունի համաճարակաբան: Նրանցից մեկն էլ համարվում է գլխավոր համաճարակաբան:

Ներկայումս մարզի գլխավոր համաճարակաբանը Սիսիանի տարածաշրջանի անասնաբույժն է:

Դա պետական ծառայություն է եւ մտնում է «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մեջ:

Հենց այդ ծառայությունն էլ հանդիսանում է մարզի անասնաբուժական ծառայության գլխավոր պատասխանատուն:

– Իսկ գյուղերում, քաղաքներում ո՞վ է իրականացնում այդ ծառայությունը:

– Տվյալ գյուղի կամ քաղաքի անասնաբույժը, ով պայմանագրային հարաբերությունների մեջ է «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ:

Վերջինս համայնքային անասնաբույժներին տրամադրում է անհրաժեշտ պատվաստանյութեր՝ պետպատվերի շրջանակում նախատեսված հիվանդությունների դեմ պայքարելու համար: Նկատի ունեմ սիբիրախտ, դաբաղ, խշխշան ռածաշրջանի անասնաբույժն է:

> *Մեր աշխատանոցը հանրապետության լավագույն լաբորատորիաներից է: Այն հագեցած է ամենաարդիական սարքավորումներով: Դրանք ճիշտ եւ արդյունավետ գործածելու նպատակով աշխարհի մի քանի երկրներում մասնակցել ենք միջազգային դասընթացների:*

– Մեծ խնդիրներ, որպես այդպիսին, չունենք: Բայց եւ ցանկալի է, որ լինեն համայնքային անասնաբույժներ, ովքեր պետպատվերից զատ անասնատերերին ցույց կտան անասնաբուժական այլ ծառայություններ եւս. դրա կարիքը զգացվում է:

– Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ բազում խնդիրներ կան այդ ոլորտում, թեեւ Դուք վիճակը բավարար եք գնահատում: Օրինակ, համայնքների անասնաբույժները հինգ ամիս շարունակ աշխատավարձ չէին ստանում...

– Հարցը դարձյալ մեր լիազորությունների մեջ չի մտնում, բայց, որքանով տեղյակ եմ, դա օբյեկտիվ պատճառներ ուներ: «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը նորաստեղծ կառույց է, եւ աշխատավարձի ուշացումը պայմանավորված էր զուտ կազմակերպական ընթացակարգերով:

– Մի ուրիշ խնդրի մասին, որին բախվում ենք մարզի գրեթե բոլոր բնակավայրերում. կադրերի խնդիրը...

– Ձեր դիտարկումը հիմնավոր է եւ տեղին: Անասնաբուժական կադրերի խնդիրը սուր է ամենուր: Երբեմնի ամենահեղինակավոր՝ անասնաբույժի մասնագիտությունը, վաղուց գրավիչ չէ երիտասարդների համար: Հատուկենտ են այն պատանիները, ովքեր հանրակրթական դպրոցն ավարտելուց հետո գնում են սովորելու բարձրագույն կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ՝ տվյալ մասնագիտությամբ կրթություն ստանալու:

Անշուշտ, կա նաեւ ցածր աշխատավարձի խնդիր:

Կարծում եմ՝ պետական մակարդակով արժեր մտահոգվել գյուղատնտեսության համար հույժ կարեւոր այդ մասնագիտության վարկանիշը, գրավչությունը բարձրացնելու հարցով:

– Շատերին հետաքրքրող եւս մեկ խնդիր. նոր կորոնավիրուսը, որ ալեկոծել է ամբողջ աշխարհը, գյուղատնտեսական կենդանիներին նույնպե՞ս վարակում է:

– Համաճարակի մեր օրերում ամենաքննարկվող հարցերից մեկն է: Տարբեր տեսակետներ են հնչում: Բայց եւ կարող եմ հավատացնել՝ դեռեւս որեւէ հիմնավոր փաստարկ կամ ապացույց չկա առ այն, որ ընտանի կենդանիները կարող են այդ վիրուսի վարակակիր լինել:

– Իսկ գյուղմթերքների դեպքո՞ւմ...

– Վաճառվող մսի օրինակը բերեմ... Վաճառողի մոտ պետք է առկա լինի անասնաբուժական N2 ձեւը, որը տրվում է համապատասխան ծառայության կողմից:

Յուրաքանչյուր քաղաքացի միս գնելիս կարող է պահանջել այդ փաստաթուղթը եւ համոզվել, որ այն ռիսկեր չի պարունակում:

Ներկայումս մարզի գյուղատնտեսական կենդանիների շրջանում որեւէ հիվանդության բռնկման փաստ չունենք, ուստի եւ արտադրվող ու վաճառվող մթերքն ապահով վիճակում է:

– Ընդդեմ ներկայիս համաճարակի երկրի մասշտաբով միջոցառումներ են իրականացվում: Ճիշտ է, դրանք առանձնապես դրական արդյունք չեն տալիս, բայց որոշակիորեն զսպում են համաճարակի ավելի խորացումը: Եթե բնակավայրերում շատ թե քիչ վերահսկվում է հակահամաճարակային վիճակը, ապա ի՞նչ կարելի է ասել հեռագնա արոտավայրերում առաջիկա մի քանի ամսում բնակվող անասնապահների մասին. ամեն մի ֆերմայում տասնյակ մարդիկ են գտնվում...

– Ես չէ, որ պետք է պատասխանեմ կարեւոր այդ հարցին: Բայց եւ կարծում եմ՝ իրենք՝ անասնապահներն ու անասնատերերը պետք է նախեւառաջ մտահոգվեն այդ խնդրով, կատարեն պարետատան բոլոր հրահանգները, հետեւեն իրենց հիգիենային, որը, խոստովանենք, հեռագնա յայլաղներում, հասկանալի պատճառներով, այնքան էլ դյուրին չէ իրականացնել:

– Անասնաբուժական պատվաստանյութերի խնդիրը. մարզում ունե՞նք համապատասխան լիցենզավորված խանութներ, առեւտրի կետեր:

– Այդ առումով խնդիրներ չունենք, կան լիցենզավորված խանութներ:

Պետպատվերի շրջանակում իրականացվող միջոցառումների համար անհրաժեշտ պատվաստանյութերը, բնականաբար, առեւտրային ցանցում չկան, դրանք մատակարարվում են պետական պատկան ծառայությունների կողմից եւ անվճար:

Մյուս դեպքերում անհրաժեշտ դեղամիջոցները կարելի է ձեռք բերել համապատասխան խանութներից:

– Չենք կարող շրջանցել մեկ այլ թեմա. ամիսներ առաջ ամբողջ հանրապետությունում աղմուկ էր բարձացել սպանդանոցների խնդրի շուրջ:

Հուլիսի 1-ին, ըստ կառավարության որոշման, սպանդանոցները պետք է գործեն, ուրիշ ճանապարհ չկա:

Սյունիքում հուլիսի 1-ից կունենա՞նք այդ սպանդանոցները, արդյո՞ք գյուղացին չի տուժի դրանից:

– Միայն Գորիսի տարածքում 4-5 սպանդանոց է ներկայումս կառուցվում, որոնք սահմանված ժամկետում կկարողանան սպանդի համար անասուններ ընդունել:

Գյուղացին, միանշանակ, չի տուժի դրանից, գրեթե բոլոր հարցերն ունեն իրենց ողջամիտ պատասխանը:

Միգուցե եւ միջնորդները նախկինի պես շահույթ ստանալու հնարավորություն չունենան, բայց գյուղացու համար խելամիտ ձեռնարկում է այդ ճանապարհով անասունների իրացումը:

Մյուս կողմից՝ այդ միջոցառման իրականացումը մի նոր եւ բարձր աստիճանի կհասցնի սննդի անվտանգությունը, որը, հատկապես ներկայիս համավարակի պայմաններում, մտահոգում է յուրաքանչյուրիս:

– Պարոն Թոխսանց, շնորհակալություն հետաքրքիր զրույցի համար:

– Ես էլ շնորհակալ եմ «Սյունյաց երկրին», որ դժվարին մեր օրերում ուշադրություն է դարձնում նաեւ մարզում իրականացվող անասնաբուժական ծառայությունների դրվածքին:

ԶՐՈՒՅՑԸ՝
ԱՆՆԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

Մեկը՝ «Պատվավոր լեռնագործներից»



Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի՝ հանրապետության հանքարդյունաբերության հսկայի հիմնադրմանը եւ կայացմանը նպաստել են բազում շարքային լեռնագործներ: Ձեռնարկության ակունքներում է կանգնած վաստակաշատ լեռնագործ Շահեն Հայրապետյանը, ում աշխատանքային կենսագրությունն անցել է Գանձասարի բաց հանքում՝ որպես էքսկավատորավար: Ծնվել է 1928-ին Գորիսի շրջանի Տաթեւ գյուղում՝ Միքայել եւ Վարսենիկ Յազուլյանների ընտանիքում: Բազմաշունչ ընտանիքի երեխաներից ավագն է եղել Շահենը: Մի ընտանիքում տասը երեխա էր հասակ առնում: Մանկությունը եւ պատանեկությունն անցել են Մեծ հայրենականի եւ հետպատերազմյան դժվարին տարիներին: Ստալինյան բռնաճնշումների ալիքը նրանց ընտանիքին եւս հասավ: 1948-ին, երբ հայրը բռնեց աքսորի ճամփան, ընտանիքի հոգսը ծանրացավ 20-ամյա Շահենի ուսերին: Ի՞նչն էր հոր աքսորվելու պատճառը. արհեստավոր մարդը բազմանդամ ընտանիքի հոգսերը հոգալու համար մասնավոր աշխատանք էր կատարում հարեւան ադրբեջանական շրջանում: Պատճառաբանում էին, թե դա բացասաբար է անդրադառնում աշխօրերի կատարմանը: Ինչեւէ: Շահենը տեղափոխվեց Քաջարան եւ աշխատանքի ընդունվեց պղնձամոլիբդենային կոմբինատում:

Պատերազմից հետո երկրի քայքայված տնտեսությունը վերականգնելու համար աշխատուժի սուր պակաս կար, նախ մասնագիտական հմտություններ ստացավ պրոֆտեխնիկական ուսումնարանում, հետո բեռնատարներով, մոտ 200 հոգու, որոնց մեջ էր Շահենը, տարան լեռնագործների ավան՝ Հանքավան: Հիշում է աշխատանքային գործունեության առաջին օրը՝ 1948 թ. մայիսի 15: Այն ժամանակ կոմբինատ չկար, Հանքավանն էլ Փիրդովդան էր կոչվում եւ կար մի քանի տեղամաս՝ շինարարական տեղամաս: Ինքն էլ 30 հոգու բրիգադավար էր՝ որմնադիրների, ծեփագործների եւ այլն: 1950-ին կոմբինատը սկսեց գործել, ինքն էլ անդամագրվեց լեռնագործների կոլեկտիվին:

Շահենի եւ նրա նման նվիրյալների շնորհիվ կոմբինատը կոմբինատ դարձավ եւ սկսեց երկրին պղնձի եւ մոլիբդենի խտանյութ մատակարարել: Ճանաչումը նվիրված աշխատանքի շնորհիվ շուտ եկավ: Լավագույն աշխատանքի համար, ավելի ստույգ ամենօրյա առաջադրանքները գերակատարելու համար արժանացել է «Պատվավոր լեռնագործ» կոչման, 1975-ին՝ պարգեւատրվել «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով, բազմիցս խրախուսվել պատվոգրերով ու մեդալներով: Նրա եւ աշխատանքային ընկերների գործունեությանն անդրադարձել է համամիութենական մամուլը:

Ի դեպ, բաց հանքում էր աշխատում եղբայրը՝ Հրանտիկը՝ նույնպես էքսկավատորավար: Շրջանային «Պղնձի համար» թերթը (4-ը օգոստոսի, 1979 թ.) տպագրել է եղբայրների լուսանկարը՝ որպես արտադրության առաջավորներ: Ի դեպ, երկուսն էլ լուսանկարային տեքստում ներկայացված են որպես կոմբինատի բաց հանքի լավագույն աշխատողներ: Եվ այսպես մինչեւ վաստակած հանգստի անցնելը կենսագրություն է հյուսել լեռնագործների կոլեկտիվում: Ամուսնացել է համագյուղացի Ծաղիկ Դանիելյանի հետ եւ ունեցել յոթ զավակ, 16 թոռ, այժմ էլ՝ ինը ծոռ:

Հունիսին է ծնվել Շահեն Հայրապետյանը: Թեպետ ամսաթիվը ստույգ չէ, բայց հարազատները մի օր են ընտրում եւ սիրելի հոր, պապիկի, գերդաստանի ավագի ծննդյան տարեդարձը հավուր պատշաճի նշում: Թեեւ կյանքի տասներորդ տասնամյակն է թեւակոխել, բայց սթափ գիտակցություն եւ հիշողություն ունի: Եվ այժմ էլ, թեպետ առաջացած տարիքին՝ հետաքրքրվում է հանապազօրյա կյանքով եւ մերօրյա իրադարձություններով: Նաեւ թոռներին ու ծոռներին հետաքրքրական պատմություններ է անում անցած-գնացած օրերի մասին:

Ծնունդդ շնորհավոր, Շահեն պապ, պատվական մարդ ու պատվավոր լեռնագործ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Յուրաքանչյուր մարզի կհատկացվի 5 մլն դրամ՝ ինքնամեկուսացված անձանց սնունդ ու սանիտարահիգիենիկ պարագաներ հատկացնելու համար

50 մլն դրամ կհատկացվի ՀՀ մարզերին՝յուրաքանչյուրին 5-ական մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է բժշկի ցուցումով ինքնամեկուսացված՝ սոցիալապես խոցելի խմբերին հատկացնել սննդամթերք, սանիտարահիգիենիկ պարագաներ և ապահովել դրանց տեղափոխման, պահեստավորման և բաշխման աշխատանքները:

Այս մասին որոշումն ընդունվեց այսօր՝ մայիսի 27-ին, կառավարության նիստի ժամանակ:

Այդ խմբերին կհատկացվեն սպիտակ ալյուր, հաճար, հնդկաձավար, ոսպ, սպիտակ բրինձ, բուսական յուղ, շաքարավազ, յոդացված աղ, օճառ, լվացքի փոշի, ժավել, ալկոգել:

Սյունիքի մարզում առկա է նոր կորոնավիրուսային հիվանդության տարածման հետեւյալ պատկերը

Հարգելի՛ սյունեցիներ

Տեղեկացնում ենք, որ այս պահի դրությամբ Սյունիքի մարզում առկա է նոր կորոնավիրոսային հիվանդության տարածման հետեւյալ պատկերը.

Ընդհանուր՝ 89 հաստատված դեպք, որից

58 հոգի բուժվել է,

15 հոգի բուժում է ստանում, որից՝

4 հոգի՝ Կապանից

1 հոգի՝ Գորիսից,

9 հոգի՝ Սիսիանից,

1 հոգի՝ Քաջարանից

16 հոգի՝ Մեղրիից:

7 հիվանդ գտնվում է Կապանի բժշկական կենտրոնում,

24 անսիմպտոմ հիվանդ մեկուսացված է տանը:

Հարգելի՛ քաղաքացիներ, խստորեն հորդորում ու կոչ ենք անում՝ պահպանեք անվտանգ վարքի ու ախտահանման հետ կապված՝ ՀՀ ԱՆ եւ պարետատան ցուցումները. զերծ մնացեք զանգվածային միջոցառումներ կազմակերպելուց ու դրանց մասնակցելուց, հավաքներից, սահմանափակեք շփումները, ձեռնարկեք միջոցառումներ՝ տանը, աշխատավայրում եւ դրսում՝ ինքներդ ձեզ ու ձեր մտերիմներին պաշտպանելու ու վարակի տարածումը կանխարգելելու համար:

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
03.06.2020Թ.

Արտակարգ դեպք Սյունիքի մարզում. Կապանի ոստիկանները «Դասուգ» ռեստորանային համալիրում կանխել են զինված «ռազբորկան»

SHAMSHYAN.com-ի տեղեկություններով՝ մայիսի 31-ին ոստիկանության Կապանի բաժնի ծառայողները կանխել են Սյունիքի մարզում զինված «ռազբորկան»:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, Կապանի ոստիկաններն օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ Քաջարան քաղաքի բնակիչ, 53-ամյա Սենիկ Զ.-ի բնակարանից 2019 թ.-ի նոյեմբերի 19-ին Քաջարան քաղաքի բնակիչ, 39-ամյա Շանթ Թ.- ի կողմից կատարված առանձնապես խոշոր չափի գողության հետ կապված ֆինանսական հարցերի շուրջ պարզաբանումներ կատարելու նպատակով Կապան համայնքի Սյունիք բնակավայրի «Դասուգ» ռեստորանային համալիրի տարածքում պետք է հանդիպում տեղի ունենա Շանթ Թ.-ի, Սենիկ Զ.-ի, Գնել Ս.-ի եւ Մերուժան Ա.-ի միջեւ:

Ոստիկանները, իրականացնելով օպերատիվ տվյալները, դարանակալում եւ պարզում են նաեւ, որ «ռազբորկայի» նրանք լինելու են Nissan Navara մակնիշի 588 SS 60 համարանիշի, Lexus մակնիշի 50 XZ 777 համարանիշի եւ Mitsubishi Pajero io մակնիշի 35 TZ 080 համարանիշի ավտոմեքենաներով եւ ավտոմեքենաներում էլ զենք է լինելու ու հնարավոր է՝ հարցերը չլուծվելու դեպքում գործի դրվի զենքը:

Ոստիկանները, երբ տեսնում են, որ արդեն «ռազբորկայի» մասնակիցները հավաքվել են մեկտեղ ու արդեն սկսվում են միմյանց մեջ պարզաբանումները, նշված անձանց բերման են ենթարկում ոստիկանության Կապանի բաժնի, որտեղ Սենիկ Զ.-ին պատկանող Lexus մակնիշի ավտոմեքենայի զննությամբ հետեւի ձախ նստատեղից հայտնաբերվում է հրազեն, իսկ առջեւի ուղեւորի նստատեղից 17 հատ հրազենի փամփուշտ:

Սենիկ Զ.-ն ոստիկաններին հայտնում է, որ նշված հրազենը պատկանում է իրեն:

Փաստի առթիվ ոստիկանության Կապանի բաժնի հետաքննչական բաժանմունքում նյութեր են նախապատրաստվում:

//

Իբր ցրտահարությունը քիչ էր, հիմա էլ՝ լվիճը

Սկիզբը՝ էջ 5

վարելահողերը կարողանանք դնել կորնգանի, առվույտի, վարսակի մշակության տակ, Սիսիանի տարածաշրջանի անասնակերի խնդիրը լիարժեք կլուծենք, կերարտադրության արդյունավետությունը կբարձրացնենք»:

Գյուղատնտեսության ոլորտը միշտ էլ հիմնախնդիրներ ունենում է, բայց, այնուամենայնիվ, ո՞րն է բնագավառի ամենանեղ օղակը, որ ամենաշատն է խանգարում առաջընթացին:

«Ոլորտում առկա պասիվությունը պայմանավորված է, – բացատրում է զրուցակիցս, – *գյուղմթերքների ինքնարժեքի ցածր լինելով, որ թեւաթափ է անում գյուղմթերք արտադրողին: Դե, իսկ գյուղատնտեսական մթերքների իրացումը տարիներով չլուծվող խնդիր է: Գյուղմթերքի վաճառքի գինն ինքնարժեքից պիտի 30 տոկոսով բարձր լինի, որ հողի մշակը, անասնապահը կարողանան եւ իր ապրուստի հոգսը հոգա, եւ անասնապահական մթերքների վերարտադրությունը կազմակերպի»:*

Իսկ կորոնավիրո՞ւսը:

«Կորոնավիրուսը չէր կարող շրջանցել գյուղատնտեսության ոլորտը, որի տնտեսական հետեւանքների չեզոքացման երկրորդ միջոցառման շրջանակում կառավարությունը զրոյացրել է պետական ծրագրերով տրվող վարկերը, անտոկոս վարկերից օգտվել են մինչեւ մեկ միլիոն դրամ վերցրած վարկառուները, երկրորդ փուլով ծրագրից կօգտվեն խոշոր ֆերմերները, մասնավորապես յոթ հոգի հայտ են ներկայացրել ջերմոցային տնտեսություն հիմնելու նպատակով, եւս երեքը՝ «Խելացի գոմերի» հետ կապված», – զրույցի ավարտին «Սյունյաց երկրին» փոխանցեց Գագիկ Խաչատրյանը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի:

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Ⓡ նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1030, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 03.06.2020թ.: